

Որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի
2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգ

Թափոնների մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր L 312, 22.11.2008 թ., էջեր 0003 - 0030

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [3],

Քանի որ

1) «Թափոնների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-
ի 2006/12/ԵՀ հրահանգը [4] սահմանում է թափոնների տնօրինման օրենսդրական
շրջանակը Համայնքում: այն սահմանում է հիմնական հասկացությունները, ինչպիսիք են,
օրինակ՝ թափոնը, վերականգնումը և թափոնների հեռացումն ու սահմանում է
թափոնների կառավարման հիմնական պահանջները, մասնավորապես, այն
պարտավորությունը, ըստ որի թափոնների կառավարման աշխատանքներ իրականացնող
հաստատությունը կամ կազմակերպությունը պետք է ունենա թույլտվություն, կամ
գրանցված լինի և որ անդամ պետությունները պարտավոր են մշակել թափոնների
կառավարման ծրագրեր: Այն նաև սահմանում է հիմնական սկզբունքները, ինչպիսիք են,
օրինակ, թափոնները տնօրինելու պարտավորությունն այնպես, որ այն բացասական
ազդեցություն չունենա շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, խրախուսում է
կիրառել թափոնների դասակարգում և աղտոտողը վճարում է սկզբունքի համաձայն,

պարտավորություն է սահմանում, ըստ որի թափոնների տնօրինման ծախսերը պետք է կրեն թափոն առաջացնող անձինք կամ կազմակերպությունները, թափոն ունեցող նախկին անձինք կամ կազմակերպությունները կամ այն ապրանք արտադրողները, որտեղից առաջացել է թափոնը,

2) Համայնքի շրջակա միջավայրին վերաբերող վեցերորդ գործողությունների ծրագիրը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 22-ի թիվ 1600/2002/ԵՀ որոշումը [5] կոչ է անում մշակել թափոնների մասին օրենսդրության փոփոխություններ, հստակեցնելով թափոն համարվող և չհամարվող նյութերի միջև դասակարգումը և մշակել այնպիսի միջոցներ, որոնք վերաբերում են թափոնների կանխարգելմանը և կառավարմանը՝ ներառյալ նպատակների սահմանումը,

3) Թափոնների կանխարգելման և վերամշակման հիմնարար ռազմավարությանն ուղղված՝ Հանձնաժողովի 2003 թվականի մայիսի 27-ի հաղորդագրությունը նշում է, որ անհրաժեշտ է գնահատել վերականգնման և թափոնների հեռացման գոյություն ունեցող սահմանումները, սահմանել վերամշակման ընդհանուր կիրառություն ունեցող սահմանումն ու բանավեճեր սկսել թափոնների սահմանման շուրջ,

4) վերոնշյալ հաղորդագրության մասին 2004 թվականի ապրիլի 20-ի իր բանաձևում [6] Եվրոպական պառլամենտը կոչ արեց Հանձնաժողովին դիտարկել «Աղտոտման ինտեգրված կանխարգելման և վերահսկման մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգը [7] թափոնների ամբողջ ոլորտի վրա տարածելու մասին: Եվրոպական պառլամենտը նաև խնդրեց Հանձնաժողովից տարբերակում մտցնել վերականգնման և թափոնների հեռացման միջև ու հստակեցնել թափոն համարվող և չհամարվող նյութերը,

5) 2004 թվականի հուլիսի 1-ի իր եզրակացության մեջ Խորհուրդը կոչ արեց Հանձնաժողովին հանդես գալ առաջարկով՝ 75/442/ԵՏՀ հրահանգի որոշ հայեցակետերի փոփոխության մասին, որը ուժը կորցրած է ճանաչվել և փոխարինվել է 2006/12/ԵՀ հրահանգով՝ նպատակ հետապնդելով տարբերակում մտցնել թափոն համարվող և չհամարվող նյութերի, ինչպես նաև թափոնների վերականգնման ու հեռացման միջև,

6) թափոններին ուղղված ցանկացած քաղաքականության առաջին նպատակը պետք է լինի թափոնների առաջացման և կառավարման բացասական ազդեցությունները մարդու առողջության և շրջակա միջավայրի համար նվազեցնելը: Թափոններին ուղղված քաղաքականությունը նաև պետք է ռեսուրսների օգտագործման նպատակ հետապնդի և նպաստի թափոնների դասակարգման գործնական կիրառությանը,

7) «Թափոնների կառավարման Համայնքի ռազմավարության մասին» 1997 թվականի փետրվարի 24-ի իր որոշման մեջ [8] Խորհուրդը հաստատեց, որ թափոնների կառավարման ոլորտում առաջնահերթություն պետք է տրվի թափոնների կանխարգելմանը և որ վերաօգտագործումն ու նյութերի վերամշակումը պետք է ավելի առաջնային լինեն, քան թափոններից էներգիայի ստացումը, եթե և այն դեպքերում, երբ դրանք լավագույն էկոլոգիական տարբերակներ են համարվում,

8) ուստի անհրաժեշտ է վերանայել 2006/12/ԵՀ հրահանգը՝ հստակեցնելու համար հիմնական հասկացությունները, ինչպիսիք են, օրինակ՝ թափոնի, թափոնների վերականգնման և հեռացման հասկացությունները, խթանելու համար այն միջոցները, որոնք պետք է նախաձեռնել՝ թափոնները կանխարգելելու նպատակով, ներմուծելու համար մի մոտեցում, որը պետք է հաշվի առնի ապրանքների և նյութերի ամբողջ ցիկլն ու ոչ միայն թափոնային փուլը և, կենտրոնանալու համար թափոնների առաջացման ու թափոնների կառավարման շրջակա միջավայրի ազդեցությունները նվազեցնելու վրա, որով մեծացվում է թափոնների տնտեսական արժեքը: Ավելին, թափոնի վերականգնումը և վերականգնված նյութերի կիրառությունը պետք է խթանվի՝ բնական ռեսուրսների պահպանության նպատակով: Հստակության և ընթեռնելիության նկատառումներից ելնելով՝ թիվ 2006/12/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչել և փոխարինել նոր հրահանգով,

9) քանի որ թափոնների կառավարման էական գործողությունները հիմնականում այժմ շրջակա միջավայրի ոլորտում կարգավորվում են Համայնքի օրենսդրությամբ, ուստի կարևոր է սույն Հրահանգը հարմարեցնել այդ մոտեցմանը: Պայմանագրի 174-րդ հոդվածում սահմանված՝ շրջակա միջավայրի նպատակների ընդգծումը թափոնների առաջացման և թափոնների կառավարման շրջակա միջավայրի ազդեցություններն առավել կշեշտադրի երկրորդային հումքի կյանքի ցիկլի համատեքստում: Հետևաբար, սույն Հրահանգի իրավական հիմքը պետք է լինի 175-րդ հոդվածը,

10) որոշ բացառություններով պետք է կիրառվեն թափոնների մշակման արդյունավետ և հետևողական կանոններ՝ շարժական գույքի նկատմամբ, որը թափոն ունեցող անձը կամ կազմակերպությունը նետում է որպես թափոն, նպատակ ունի կամ պարտավոր է նետել,

11) փորած չաղտոտված գրունտի՝ թափոններին առնչվող կարգավիճակը և տեղանքում օգտագործվող մյուս բնականորեն առաջացող նյութերը (բացի այն նյութերից, որոնք ստացվում են փորման հետևանքով) կարգավորվում են թափոնների սահմանման և

կողմնակի արտադրանքի կամ թափոնի կարգավիճակի դադարեցման մասին դրույթների համաձայն՝ սույն Հրահանգին համապատասխան,

12) Մարդու կողմից սպառման համար չնախատեսված կենդանական կողմնակի արտադրանքին վերաբերող՝ առողջության մասին կանոններ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1774/2002 կանոնակարգը (ԵՀ) [9] սահմանում է, որ մասնավորապես, համամասնական վերահսկողություն պետք է սահմանվի կենդանական բոլոր կողմնակի արտադրանքի հավաքման, տեղափոխման, մշակման կիրառության և հեռացման դեպքում, ներառյալ կենդանական ծագման թափոնները՝ այդպիսով կանխելով կենդանիներին և հանրային առողջությանը սպառնացող վտանգը: Ուստի անհրաժեշտ է հստակեցնել կապն այդ կանոնակարգի հետ՝ սույն Հրահանգի շրջանակից կենդանական կողմնակի արտադրանքը բացառելու միջոցով խուսափելով կրկնակի կանոններից, եթե այդ արտադրանքը պետք է օգտագործվի թափոնի հետ չառնչվող աշխատանքներում,

13) թիվ 1774/2002 (ԵՀ) կանոնակարգը կիրառելիս ձեռք բերված փորձառության համատեքստում հարկ է հստակեցնել թափոններին առնչվող օրենսդրության շրջանակը և կենդանական կողմնակի արտադրանքի մասով վտանգավոր թափոնների մասին դրա դրույթները, որոնք կարգավորվում են թիվ 1774/2002 (ԵՀ) կանոնակարգով: Եթե կենդանական կողմնակի արտադրանքը պոտենցիալ վտանգ է ներկայացնում առողջության համար, նման վտանգներին դիմակայելու իրավական գործիքը թիվ 1774/2002 կանոնակարգն(ԵՀ) է: Պետք է խուսափել նաև թափոններին առնչվող օրենսդրության անհարկի համընկնումից,

14) թափոնի դասակարգումը՝ որպես վտանգավոր թափոն, պետք է հենվի, մասնավորապես, քիմիական նյութերի մասին Համայնքի օրենսդրության վրա, մասնավորապես վտանգավոր դասակարգվող պատրաստուկների մասով՝ ներառյալ այդ նպատակով օգտագործվող խտության ստանդարտ արժեքները: Վտանգավոր թափոնները պետք է կարգավորվեն խիստ մանրամասներով՝ խուսափելու, կամ հնարավորինս, սահմանափակելու համար շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա պոտենցիալ բացասական ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ անհարկի կառավարման հետևանքով: Ավելին, հարկավոր է շահագործել այնպիսի համակարգ, ըստ որի թափոնները և վտանգավոր թափոնները դասակարգվում են թափոնների տեսակների ցանկի համաձայն , որը վերջին անգամ հաստատվել է Հանձնաժողովի 2000/532/ԵՀ որոշմամբ [10]՝ խթանելու համար թափոնների ներդաշնակեցված դասակարգումն ու

ապահովելու համար, որ վտանգավոր թափոնների սահմանումը Համայնքի սահմաններում ներդաշնակորեն կատարվի,

15) անհրաժեշտ է տարբերակում մտցնել հավաքման համար նախատեսված թափոնների նախնական պահեստավորման, թափոնների հավաքման և մշակման համար նախատեսված թափոնների պահեստավորման միջև: Այն կազմակերպությունները կամ ձեռնարկությունները, որոնք իրենց գործունեության ընթացքում թափոն են արտադրում, չպետք է համարվեն թափոնների կառավարման մեջ ընդգրկված միավորներ և թույլտվություն չպետք է ստանան՝ հավաքման նպատակով թափոններ պահեստավորելու համար,

16) հավաքման նպատակով թափոնների նախնական պահեստավորումն ընկալվում է որպես այնպիսի պահեստավորում, որը նախատեսված է թափոնների բեռնաթափման տարածքում հավաքման նպատակով՝ խուսափելու համար հետագա տեղափոխումից մեկ այլ վայրում՝ վերականգնման կամ հեռացման նպատակով: Հավաքման նպատակով թափոնների նախնական պահեստավորումը պետք է տարբերակվի վերամշակման համար թափոնների պահեստավորումից՝ սույն Հրահանգի նպատակներով: Տարբերակումը պետք է կատարվի ըստ թափոնի տեսակի, չափի, պահեստավորման ժամկետի և հավաքման նպատակի: Տարբերակումը պետք է կատարվի անդամ պետությունների կողմից: Երեք տարի և ավելի ժամկետով թափոնների պահեստավորումը վերականգնումից առաջ և մեկ տարի ու ավելի ժամկետով թափոնների պահեստավորումը՝ նախքան հեռացումը, կարգավորվում է «Աղբավայրերի մասին» Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/31/ԵՀ հրահանգով [11],

17) թափոնների հավաքման այն ծրագրերը, որոնք չեն իրականացվում մասնագիտական հիմունքով, չպետք է գրանցվեն, քանի որ դրանք ավելի ցածր ռիսկայնություն ունեն և նպաստում են թափոնների առանձին հավաքմանը: Նման ծրագրերի օրինակներ են դեղատների կողմից հավաքվող դեղագործական թափոնները խանութներում սպառման ապրանքների գծով, վերադարձվող ապրանքները և դպրոցներում համայնքային ծրագրերը,

18) կանխարգելման, վերաօգտագործման, վերաօգտագործման նախապատրաստման, մշակման և վերամշակման սահմանումները պետք է տրվեն սույն Հրահանգում՝ հստակեցնելու համար այդ հասկացությունների շրջանակը,

19) վերականգնման և թափոնների հեռացման սահմանումները պետք է փոփոխվեն՝ այդ երկու սահմանման միջև տարբերակման հստակությունն ապահովելու համար՝ հաշվի

առնելով տնտեսության մեջ բնական ռեսուրսների փոխադարձ օգտագործման միջոցով շրջակա միջավայրի ազդեցության իրական տարբերությունն ու ընդունելով, որ որպես ռեսուրս՝ թափոնի օգտագործումը պոտենցիալ օգտակարություն ունի շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Բացի դրանից, պետք է ուղեցույցներ մշակվեն՝ հստակեցնելու համար այն դեպքերը, երբ այս տարբերակումը դժվար է կիրառել գործնականում և, երբ որպես վերականգնում, գործողության դասակարգումը չի համապատասխանում այդ գործունեության բնապահպանական իրական ազդեցությանը,

20) սույն Հրահանգը նաև պետք է հստակեցնի, թե որ դեպքերում է քաղաքային կոշտ թափոնների այրումը էներգետիկ առումով արդյունավետ և կարող է համարվել վերականգնողական,

21) դեպի ծով և օվկիանոս արտանետումից բաղկացած թափոնների հեռացման գործողությունները, այդ թվում՝ թափոնների թաղումը ծովի հատակում, նույնպես կարգավորվում են միջազգային կոնվենցիաներով, մասնավորապես, «Թափոնների և այլ նյութերի հեռացման պատճառով ծովային աղտոտումը կանխարգելելու մասին» կոնվենցիան, որը ստորագրվել է 1972 թվականի նոյեմբերի 13-ին և այդ կոնվենցիային կից արձանագրությունը (1996 թ.)՝ փոփոխված 2006 թվականին,

22) շփոթություն չպետք է առաջանա թափոնի սահմանման տարբեր հայեցակետերի միջև և, անհրաժեշտության դեպքում, կողմնակի արտադրանքի նկատմամբ պետք է կիրառվեն համապատասխան ընթացակարգեր, որը թափոն չէ՝ մի կողմից և այն թափոնի նկատմամբ, որը դադարում է այդպիսին լինելուց՝ մյուս կողմից: Սահմանելու համար թափոնի սահմանման տարբեր հայեցակետերը՝ սույն Հրահանգը պետք է հստակեցնի՝

– թե երբ են արտադրական պրոցեսից ստացված այն նյութերը կամ առարկաները, որոնք հիմնականում չպետք է ստացվեին տվյալ արտադրական պրոցեսից, համարվում նյութեր կամ առարկաներ՝ որպես կողմնակի արտադրանք և ոչ որպես թափոն: Կարելի է որոշում ընդունել այն մասին, որ նյութը թափոն չէ միայն համակարգված մոտեցման դեպքում, որը պետք է պարբերաբար թարմացվի և եթե դա համապատասխանում է շրջակա միջավայրի ու մարդու առողջության պաշտպանությանը: Եթե կողմնակի արտադրանքի կիրառությունը թույլատրված է շրջակա միջավայրի արտոնագրի կամ շրջակա միջավայրի ընդհանուր կանոնների համաձայն, դա կարող է օգտագործվել անդամ պետությունների կողմից որպես գործիք՝ որոշելու համար, որ շրջակա միջավայրի կամ մարդու առողջության համար ընդհանուր բացասական ազդեցություններ տեղի չեն ունենա. առարկան կամ նյութը կարող է համարվել կողմնակի արտադրանք, եթե առկա են

որոշ պայմաններ: Քանի որ կողմնակի արտադրանքը դասակարգվում է որպես արտադրանք, կողմնակի արտադրանքի արտահանումները պետք է պահպանեն Համայնքի համապատասխան օրենսդրության պահանջները. և

- եթե որոշ թափոններ դադարում են թափոն լինելուց, համապատասխանելով ոչ թափոնային չափորոշիչին, որն ապահովում է շրջակա միջավայրի բարձր պաշտպանություն և բնապահպանական ու տնտեսական օգուտներ. թափոնի հնարավոր կատեգորիաները, որոնց դեպքում պետք է կիրառվեն «ոչ թափոնային» մասնագրեր և չափորոշիչներ, ի թիվս այլոց, հետևյալն են՝ շինարարական և քանդման թափոնները, որոշ մոխիրներ և կեղտ, մետաղի թափոններ, կայքեր, անվադողեր, տեքստիլ, օրգանական պարարտանյութեր, թղթի և ապակու թափոններ: «Ոչ թափոնային» կարգավիճակ ձեռք բերելու համար վերականգնման գործողությունները կարող են լինել այնքան պարզ, որքան թափոնի ստուգման գործողություններն են, որպեսզի հնարավոր լինի ստուգելու, որ այն իրականում բավարարում է «ոչ թափոնային» չափորոշիչները:

23) ստուգելու և հաշվարկելու համար, թե արդյոք վերամշակման և վերականգնման նպատակները, ինչպես դրանք սահմանված են «Փաթեթավորման և թափոնների փաթեթավորման մասին» Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20-ի 94/62//ԵՀ հրահանգում [12], «Շահագործումից դուրս եկած փոխադրամիջոցների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի սեպտեմբերի 18-ի 2000/53/ԵՀ հրահանգում [13], «Էլեկտրական և էլեկտրոնիկայի թափոնային սարքերի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 27-ի հրահանգում (ԹԷԷՍ) [14] և «Մարտկոցների և կուտակիչների ու թափոն հանդիսացող մարտկոցների և կուտակիչների մասին» Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հրահանգում, ինչպես նաև Համայնքի այլ օրենսդրության մեջ բավարարված են, այն թափոնները, որոնք դադարում են այդպիսին լինելուց, պետք է համարվեն վերամշակված և վերականգնված թափոն, եթե այդ օրենսդրության վերամշակման և վերականգնման պահանջները բավարարված են,

24) թափոնի սահմանման հիման վրա և հստակությունն ու հետևողականությունը խթանելու նպատակով Հանձնաժողովը կարող է ուղեցույցներ ընդունել՝ սահմանելու համար, թե որ դեպքերում են նյութերը կամ առարկաները դառնում թափոն: Նման ուղեցույցներ կարող են մշակվել, մասնավորապես, էլեկտրական և էլեկտրոնիկայի սարքավորումների ու սարքերի համար,

25) հարկ է բաշխել ծախսերն այնպես, որ դրանք արտացոլեն թափոնի առաջացման և կառավարման իրական արժեքը շրջակա միջավայրում,

26) «աղտոտողը վճարում է» սկզբունքը եվրոպական և միջազգային ասպարեզներում գլխավոր սկզբունք է: Թափոն արտադրողը և թափոն ունեցող անձը կամ կազմակերպությունը պետք է կառավարեն թափոններն այնպես, որ շրջակա միջավայրի և մարդու առողջության պաշտպանության բարձր մակարդակ երաշխավորվեն,

27) սույն Հրահանգով արտադրողների նկատմամբ ընդլայնված պատասխանատվության ներմուծումը միջոց է՝ ապրանքների նախագծմանը և արտադրությանն աջակցելու համար, որը լիովին հաշվի է առնում և օժանդակում է ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ամբողջ ցիկլի ընթացքում՝ ներառյալ վերանորոգումը, վերաօգտագործումը, ապամոնտաժումը և վերամշակումը՝ առանց խոչընդոտելու ապրանքների ազատ շրջանառությունը ներքին շուկայում,

28) սույն Հրահանգը պետք է օժանդակի ԵՄ-ին առավել մոտենալ «վերամշակող հասարակության» սկզբունքին՝ ձգտելով խուսափել թափոնների առաջացումից և օգտագործել թափոնները որպես ռեսուրս: Մասնավորապես, Համայնքի շրջակա միջավայրի վեցերորդ գործողության ծրագիրը կոչ է անում այնպիսի միջոցներ ընդունել, որոնց նպատակը թափոնների առաջնային հոսքերի սկզբնաղբյուրների տարաբաժանումը, հավաքումը և վերամշակումն ապահովելն է: Այդ նպատակին համահունչ ու վերականգնման ներուժին աջակցելու և այն խթանելու նպատակով թափոնները պետք է առանձին-առանձին հավաքվեն, եթե դա տեխնիկապես, շրջակա միջավայրի և տնտեսության առումով հնարավոր է՝ դա կատարելով նախքան վերականգնման գործողություններ նախաձեռնելը, որն ընդհանուր լավագույն բնապահպանական արդյունք է ապահովում: Անդամ պետությունները պետք է խրախուսեն թունավոր միացությունների առանձնացումը թափոնային հոսքից, անհրաժեշտության դեպքում ձեռք բերելով շրջակա միջավայրի լավագույն կառավարում,

29) անդամ պետությունները պետք է խրախուսեն վերամշակվող նյութերի կիրառությանը, ինչպիսին է, օրինակ, վերականգնված թուղթը, որը համահունչ է թափոնների դասակարգման և վերամշակող հասարակության նպատակին: Նրանք հնարավորինս չպետք է խրախուսեն նման վերամշակվող նյութերի աղբանետումը կամ այրումը,

30) կիրարկելու համար Պայմանագրի 174(2) հոդվածի նախազգուշական սկզբունքը և կանխարգելիչ գործողությունների սկզբունքը՝ անհրաժեշտ է սահմանել շրջակա միջավայրի ստանդարտ նպատակներ՝ Համայնքի ներսում թափոնները կառավարելու

համար: Այդ սկզբունքների շնորհիվ Համայնքը և անդամ պետությունները պետք է շրջանակ սահմանեն՝ կանխարգելելու, նվազեցնելու և հնարավորինս վերացնելու համար ադոտոտումը կամ անբարենպաստ ազդեցությունը հենց սկզբնաղբյուրից՝ միջոցներ ընդունելով, որոնց համաձայն հայտնի վտանգները կվերացվեն,

31) թափոնների դասակարգումը սովորաբար սահմանում է թափոններին վերաբերող օրենսդրության և քաղաքականության բնապահպանական ընդհանուր այլընտրանքների լավագույն տարբերակների առաջնայնություն, չնայած հնարավոր է հեռանալ այդ դասակարգումից թափոնների որոշ հոսքերի դեպքում, եթե դա հիմնավորված է, մասնավորապես, տեխնիկական իրագործելիությամբ, տնտեսական կենսունակությամբ և շրջակա միջավայրի պաշտպանությամբ,

32) Համայնքին հնարավորություն տալու համար ամբողջովին ինքնուրույն դառնալ՝ թափոնների հեռացման և քաղաքային տարաբնույթ թափոնների վերականգնման հարցում, որը հավաքվում է մասնավոր տնտեսություններից և հնարավորություն տալու համար անդամ պետություններին՝ առանձին-առանձին շարժվել դեպի այդ նպատակը, անհրաժեշտ է դրույթ սահմանել՝ համագործակցության ցանց ստեղծելու մասին թափոնների հեռացման կայանների և մասնավոր տնտեսություններից հավաքված տարաբնույթ քաղաքային թափոնների վերականգնման կայանների հարցում՝ հաշվի առնելով աշխարհագրական հանգամանքները և մասնագիտացված կայանների անհրաժեշտությունը՝ թափոնների որոշ տեսակների համար:

33) «Թափոնների տեղափոխման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հունիսի 14-ի թիվ 1013/2006 թվականի կանոնակարգը (ԵՀ) կիրառելու նպատակով, տարաբնույթ քաղաքային թափոնները, ինչպես նշված է այդ կանոնակարգի 3(5) հոդվածում, համարվում են տարաբնույթ քաղաքային թափոն, եթե նույնիսկ դրանք ենթարկվում են վերամշակման, որն էականորեն չի փոխում դրանց հատկությունները,

34) կարևոր է, որ վտանգավոր թափոնները մակնշվեն միջազգային և Համայնքի ստանդարտների համաձայն: Այնուամենայնիվ, եթե նման թափոնները հավաքվում են առանձին տնտեսություններից, դա չպետք է պարտադրի տնտեսության տերերին՝ լրացնել համապատասխան փաստաթղթեր,

35) համաձայն թափոնների դասակարգման և աղբավայրերի թափոնների հեռացումից առաջացող ջերմոցային գազերի արտանետումը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է օժանդակել կենսաթափոնների առանձին հավաքմանը և պատշաճ մշակմանը՝ արտադրելու համար շրջակա միջավայրի համար ապահով կենսաբանական

պարարտանյութեր և այլ կենսաթափոնների հիմքով նյութեր: Կենսաթափոնների կառավարման գնահատում անցկացնելուց հետո Հանձնաժողովն առաջարկներ է ներկայացնում օրենսդրական ակտերի նպատակով, եթե դա անհրաժեշտ է,

36) կարելի է ընդունել թափոնների մշակման գործունեությանը վերաբերող նվազագույն տեխնիկական ստանդարտներ, որոնք չեն կարգավորվում 96/61/ԵՀ հրահանգով, եթե փաստեր կան, որոնք ապացուցում են, որ մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանությունը կօգտվի դրանից և եթե սույն Հրահանգի հետ համակարգված մոտեցումը կապահովի մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանությունը,

37) անհրաժեշտ է նաև սահմանել թափոնների կառավարման ծրագրման պարտավորության մասշտաբները և բովանդակությունն ու թափոնների կառավարման ծրագրերը մշակելու կամ փոփոխելու պրոցեսում ինտեգրել թափոնների առաջացման և կառավարման շրջակա միջավայրի ազդեցությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը: Հարկ եղած դեպքում պետք է նաև հաշվի առնվի թափոնների ծրագրման պահանջները, որոնք սահմանված են 94/62/ԵՀ հրահանգի 14-րդ հոդվածում, ինչպես նաև աղբավայրերում թափվող կենսաբանորեն քայքայվող թափոնների կրճատման ռազմավարությունը, որը նշված է 1999/31/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածում,

38) անդամ պետությունները կարող են կիրառել շրջակա միջավայրի թույլտվությունների համակարգ կամ շրջակա միջավայրի ընդհանուր կանոններ որոշ թափոն արտադրողների նկատմամբ՝ առանց սահմանափակելու ներքին շուկայի հստակ գործունեությունը,

39) թիվ 1013/2006 կանոնակարգի (ԵՀ) համաձայն՝ անդամ պետությունները կարող են միջոցներ ընդունել, որոնք անհրաժեշտ են թափոնների տեղափոխումը կանխելու նպատակով, եթե դրանք չեն համապատասխանում թափոնների կառավարման ծրագրերին: Շեղում կատարելով այդ կանոնակարգից՝ անդամ պետությունները պետք է իրավունք ունենան սահմանափակելու թափոնների կատարվող տեղափոխումները՝ այրելով դրանք թափոնների այրման վառարաններում՝ դասակարգելով այն որպես վերականգնում, եթե հայտնի է, որ պետական աղբը կարող էր հեռացվել կամ մշակվել թափոնների կառավարման ծրագրերին չհամապատասխանող եղանակով: Հայտնի է, որ որոշ անդամ պետություններն ի վիճակի չեն իրենց տարածքում վերջնական վերականգնողական կայանների ամբողջական շղթայից բաղկացած ցանց ապահովել,

40) կատարելագործելու համար այն եղանակը, ըստ որի թափոնների կանխարգելման գործողությունները ձեռնարկվում են անդամ պետություններում և օժանդակելու համար այս բնագավառում լավագույն պրակտիկայի տարածումը, անհրաժեշտ է ամրապնդել այն

դրույթները, որոնք վերաբերում են թափոնների կանխարգելմանը և պարտավորեցնել անդամ պետություններին՝ մշակել թափոնների կանխարգելման ծրագրեր՝ շեշտադրելով շրջակա միջավայրի հիմնական ազդեցությունները և հաշվի առնելով արտադրանքի ու նյութերի կենսական ամբողջ ցիկլը: Նման միջոցները տնտեսական աճի և շրջակա միջավայրի վրա թափոնների առաջացման ազդեցությունների միջև կապ հաստատելու նպատակ պետք է հետապնդեն : շահագրգիռ անձինք, ինչպես նաև լայն հանրությունը պետք է հնարավորություն ունենան մասնակցելու նախագծերի կազմմանը, իսկ դրանք կազմելուց հետո, պետք է հասանելի լինեն նրանց համար՝ Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշակի ծրագրերի և նախագծերի կազմմանը հասարակության մասնակցությունը նախատեսող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՇ հրահանգի [17] համաձայն: Թափոնները կանխարգելելու և դրանց ազդեցությունը վերացնելու նպատակները պետք է, հարկ եղած դեպքում, մշակվեն այնպես, որ թափոնի բացասական ազդեցությունները կրճատվեն և ավելի քիչ թափոն արտադրվի,

41) նպատակ հետապնդելով շարժվել եվրոպական վերամշակող հասարակության ուղղությամբ, որտեղ ռեսուրսներն օգտագործվում են բարձր արդյունավետությամբ, պետք է սահմանվեն շեմային սահմաններ՝ թափոնների վերաօգտագործման և վերամշակման համար: Անդամ պետությունները տարբեր մոտեցումներ են մշակում՝ տնտեսությունների թափոնները և նմանատիպ բնույթի կամ բաղադրության թափոններ հավաքելու համար: Ուստի հարկ է, որ նման շեմերով տարբեր անդամ պետությունների աղբի հավաքման տարբեր համակարգեր հաշվի առնվեն: Այլ ծագման թափոնային հոսքերը, որոնք նման են տնտեսությունների թափոններին, ներառում են Հանձնաժողովի 2000/532/ԵՇ որոշմամբ սահմանված ցանկի 20-րդ կետում նշված թափոնները,

42) տնտեսական գործիքները կարող են էական դեր խաղալ թափոնների կանխարգելման և կառավարման նպատակները ձեռք բերելու հարցում: Հաճախ թափոնն արժեք ունի որպես ռեսուրս, իսկ տնտեսական գործիքների լրացուցիչ կիրառությունը կարող է առավելագույնի հասցնի դրա բնապահպանական առավելությունները: Համապատասխան մակարդակում նման գործիքների կիրառությունն, ուստի, պետք է խրախուսվի՝ միննույն ժամանակ շեշտելով, որ առանձին անդամ պետություններն իրավասու լինեն որոշումներ ընդունելու դրանց կիրառության վերաբերյալ,

43) թափոնների տնօրինման որոշ դրույթներ, որոնք սահմանված են «Թունավոր թափոնների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/689/ԵՏՀ հրահանգում

[18], պետք է փոփոխվեն՝ հնացած դրույթները չեղյալ հայտարարելու և տեքստի հստակությունը բարձրացնելու նպատակով: Համայնքի օրենսդրությունը պարզեցնելու նպատակով այդ դրույթները պետք է ինտեգրվեն սույն Հրահանգի մեջ: 91/689/ԵՏՀ հրահանգով սահմանված՝ թունավոր թափոններն իրար խառնելու արգելքը հստակեցնելու համար, ինչպես նաև շրջակա միջավայրը և մարդու առողջությունը պաշտպանելու նպատակով, թունավոր թափոնները իրար խառնելու արգելքից բացառությունները պետք է նաև համապատասխանեն գոյություն ունեցող լավագույն տեխնիկաներին, ինչպես սահմանված է 96/61/ԵՀ հրահանգում: Ուստի, 91/689/ԵՏՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի,

44) Համայնքի օրենսդրությունը պարզեցնելու և շրջակա միջավայրի օգուտներն արտացոլելու նպատակով, «Նավթի թափոնների հեռացման մասին» Խորհրդի 1975 թվականի հունիսի 16-ի 75/439/ԵՏՀ հրահանգի համապատասխան դրույթները պետք է ինտեգրվեն սույն Հրահանգում: Ուստի, 75/439/ԵՏՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի: Նավթի թափոնների կառավարումը պետք է իրականացվի թափոնների դասակարգման առաջնայնության համաձայն և նախապատվություն պետք է տրվի այն տարբերակներին, որոնք ապահովում են շրջակա միջավայրի մասով լավագույն արդյունք՝ ընդհանուր կտրվածքով: Նավթի թափոնների առանձին հավաքումը մնում է էական՝ դրանց ճիշտ կառավարման և ոչ ճիշտ հեռացման հետևանքով շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման առումով,

45) անդամ պետությունները պետք է սահմանեն արդյունավետ, համամասնական և տարհամոզիչ տույժեր, որոնք պետք է պարտադրվեն թափոնների կառավարման համար պատասխանատու ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ, օրինակ՝ թափոններ արտադրողների, թափոն ունեցող անձանց կամ կազմակերպությունների, միջնորդների, դիլերների, տեղափոխողների և աղբ հավաքողների նկատմամբ, կազմակերպությունների կամ ձեռնարկությունների նկատմամբ, որոնք իրականացնում են թափոնների մշակման գործունեություն և թափոնների կառավարման ծրագրեր, եթե նրանք խախտում են սույն Հրահանգի դրույթները: Անդամ պետությունները կարող են նաև գործողություններ ձեռնարկել՝ փոխհատուցելու համար պարտավորություններից հրաժարվելու և հետևանքները վերացնելու ծախսերը՝ չխախտելով «Շրջակա միջավայրին հասցված վնասները կանխարգելելու և վերացնելու մասով բնապահպանական պատասխանատվության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգը [20],

46) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/EC հրահանգի համաձայն, որով սահմանվում է Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ ընթացակարգերը [21],

47) մասնավորապես, Հանձնաժողովը մի շարք հարցերի շուրջ պետք է իրավասություն ունենա չափորոշիչներ սահմանելու, օրինակ, թե որ պայմանների համաձայն է առարկան համարվում կողմնակի արտադրանք, երբ է այն ձեռք բերում ոչ թափոնային կարգավիճակ և երբ է որոշվում, որ թափոնը թունավոր է: Հանձնաժողովը պետք է նաև մանրամասն կանոններ սահմանի՝ կիրառման և հաշվարկման մեթոդների վերաբերյալ վերամշակման շեմերի հետ համապատասխանությունն ստուգելու համար, որոնք սահմանված են սույն Հրահանգում: Ավելին, Հանձնաժողովը պետք է իրավասություն ունենա համապատասխանեցնել հավելվածները տեխնիկական և գիտական առաջընթացին ու սահմանել աղբի այրման վառարանների կիրառության բանաձևը, որը նշված է , II հավելվածում, R1: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու և, ի թիվս այլոց, այն նոր, ոչ էական տարրերով լրացնելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն թիվ 1999/468/ԵՇ որոշման 5ա հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորման ընթացակարգի համաձայն,

48) բարելավված օրինաստեղծ գործունեության մասին միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ պարբերությանը համապատասխան [22]՝ անդամ պետություններին պետք է խրախուսել, իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմել սույն Հրահանգի և փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ ու հրապարակել դրանք,

49) քանի որ անդամ պետությունները չեն կարող բավարար չափով հասնել սույն Հրահանգի նպատակին, այն է՝ պաշտպանել շրջակա միջավայրը և մարդու առողջությունը, և քանի որ այն, գործողության ծավալի կամ ազդեցության նկատառումներով, կարելի է ավելի լավ իրականացնել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է, սուբսիդիարության սկզբունքի համաձայն, ակտեր ընդունել, ինչպես սահմանված է Պայմանագրի 5-րդ հոդվածով: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակին հասնելու համար,

ԳԼՈՒԽ I

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն Հրահանգը միջոցներ է սահմանում՝ պաշտպանելու համար շրջակա միջավայրը և մարդու առողջությունը՝ թափոնների արտադրման ու կառավարման բացասական ազդեցությունները կանխելու կամ նվազեցնելու, ինչպես նաև ռեսուրսների կիրառության ընդհանուր ազդեցությունները նվազեցնելու և նման կիրառության արդյունավետությունը բարձրացնելու միջոցով:

Հոդված 2

Գործողության ոլորտի բացառումները

1. Ստորև նշվածը չպետք է ներառվի սույն Հրահանգի գործողության ոլորտում.

ա) մթնոլորտ արտանետվող հեղուկ գազեր.

բ) հող (տեղանքում), որը ներառում է չփորած աղտոտված հող և և այդ հողին ամրացված շինություններ.

գ) չաղտոտված հող և այլ բնականորեն առաջացող նյութեր, որոնք փորվել հանվել են շինարարության ժամանակ, եթե այդ նյութը շինարարական նպատակներով իր բնական վիճակում հաստատ օգտագործվում է այն տեղանքում, որտեղից այն փորվել է.

դ) ռադիոակտիվ թափոններ.

ե) շահագործումից հանված պայթուցիկներ.

զ) կղանքը, եթե այն չի կարգավորվում 2(բ) պարբերությամբ, ծղոտը և այլ բնական ոչ թունավոր գյուղատնտեսական կամ անտառատնտեսության նյութեր, որոնք օգտագործվում են ֆերմերային տնտեսություններում, անտառներում կամ նման կենսազանգվածից էներգիա ստանալու նպատակով այնպիսի պրոցեսներով և մեթոդներով, որոնք վնաս չեն պատճառում շրջակա միջավայրին կամ վտանգում մարդու առողջությունը:

2. Ստորև նշվածը չի կարգավորվում սույն Հրահանգի գործողության շրջանակում, քանի որ դրանք կարգավորվում են Համայնքի այլ օրենսդրությամբ՝

ա) կեղտաջրերը.

բ) կենդանիների կողմնակի արտադրանքը՝ ներառյալ մշակում անցած արտադրանքը, որը կարգավորվում է թիվ 1774/2002 կանոնակարգով (ԵՀ), բացի այն արտադրանքից, որը մշակվում է այրման միջոցով, թափվում է աղբանոցներում կամ օգտագործվում է բիոգազ կամ կենսաբանական պարարտանյութեր ստանալու նպատակով.

գ) կենդանիների դիերը, որոնք սատկել են և ոչ թե սպանվել՝ ներառյալ այն կենդանիները, որոնք սպանվել են՝ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով և որոնք հեռացվել են՝ թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) համաձայն.

դ) հանքային ռեսուրսների պեղումների, արդյունահանման, մշակման և պահեստավորման արդյունքում ստացված թափոններ և «Արդյունահանող արդյունաբերությունից թափոնների կառավարման մասին» Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգով կարգավորվող հանքավայրերի շահագործում [23]:

3. Չսահմանափակելով Համայնքի՝ համապատասխան այլ օրենսդրության պարտավորությունները, ջրերը կառավարելու, ջրհեղեղները կանխարգելելու կամ ջրհեղեղների և երաշտների ազդեցությունները մեղմացնելու նպատակով մակերևութային ջրեր ու ջրանցքներ թափված նստվածքները և հողի մելորացիան չի կարգավորվում սույն Հրահանգի շրջանակում, եթե ապացուցված է, որ նստվածքները թունավոր չեն:

4. Մասնավոր դեպքերի համար կամ սույն Հրահանգին լրացնող՝ թափոնների մասնավոր կատեգորիաների կառավարման մասին հատուկ կանոնները կարելի է սահմանել առանձին հրահանգներով:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «Թափոն» նշանակում է ցանկացած նյութ կամ առարկա, որը թափոն ունեցող անձը կամ կազմակերպությունը թափում, մտադիր է թափել կամ պարտավոր է թափել.

2. «Թունավոր թափոն» նշանակում է թափոն, որն ունի III հավելվածում նշված թունավոր հատկություններից որևէ մեկը կամ մի քանիսը.
3. «նավթի/յուղի թափոններ» նշանակում է ցանկացած հանքանյութ կամ սինթետիկ քսուք կամ արդյունաբերական նավթ, որ նախնական օգտագործման համար ոչ պիտանի է դարձել, ինչպես օրինակ՝ ներքին այրման շարժիչների նավթը և ռեդուկտորի յուղերը, քսուքային յուղերը, տուրբինների յուղերը և հիդրավլիկ յուղերը.
4. «կենսաթափոն» նշանակում է կենսաբանորեն քայքայվող պարտեզի կամ այգու թափոն, կերակուր կամ խոհանոցային թափոն՝ տնտեսություններից, ռեստորաններից, ճաշարաններից և վարձակալված վայրերից: Սրա մեջ մտնում են նաև սննդի մշակման կենտրոնների նմանատիպ թափոնները.
5. «թափոն արտադրող» նշանակում է ցանկացած սուբյեկտ, որի գործունեության արդյունքում թափոն է արտադրվում (սկզբնական թափոն արտադրող) կամ ցանկացած սուբյեկտ, որը նախնական մշակում, խառնում կամ այլ գործողություններ է իրականացնում, որի արդյունքում թափոնի բնույթը կամ բաղադրությունը փոխվում է.
6. «թափոն ունեցող անձ կամ կազմակերպություն» նշանակում է թափոն արտադրողը կամ որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի սեփականությունն է թափոնը.
7. «դիլեր» նշանակում է ցանկացած կազմակերպություն, որը ղեկավար դեր ունի թափոնների առքի և հետագա վաճառքի հարցում: Սա ներառում է այն դիլերներին, որոնք թափոնի ֆիզիկական սեփականատերը չեն.
8. «միջնորդ» նշանակում է ցանկացած կազմակերպություն, որն այլոց անունից կազմակերպում է թափոնի վերականգնում կամ հեռացում, ներառյալ այն միջնորդները, որոնք թափոնի ֆիզիկական սեփականատերերը չեն.
9. «թափոնի կառավարում» նշանակում է թափոնի հավաքում, տեղափոխում, վերականգնում և հեռացում՝ ներառյալ նման գործողությունների վերահսկումը և թափոնների աղբավայրերի հետագա խնամքը: Սրա մեջ մտնում են որպես դիլեր և միջնորդ ձեռնարկված գործողությունները.
10. «հավաքում» նշանակում է թափոնի հավաքում, որի մեջ մտնում է նախնական տեսակավորումը և նախնական պահեստավորումը՝ թափոնների մշակման կայան տեղափոխելու նպատակով.

11. «ատանձին հավաքում» նշանակում է հավաքում, որի դեպքում թափոնի հոսքերը պահվում են ատանձին՝ ըստ տեսակի և բնույթի այնպես, որ հեշտ լինի դրանք մշակել:

12. «կանխարգելում» նշանակում է այնպիսի միջոցներ, որոնք ձեռնարկվում են՝ նախքան նյութերը կամ արտադրանքը կդառնան թափոն, որի շնորհիվ նվազեցվում է՝

ա) թափոնի քանակությունը՝ ներառյալ արտադրանքի կրկնակի օգտագործման կամ արտադրանքի օգտագործման տևողությունը երկարացնելու միջոցով:

բ) առաջացած թափոնի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդու առողջության համար. կամ

գ) վնասակար նյութերի բաղադրությունը՝ նյութերում և արտադրանքում:

13. «վերաօգտագործում» նշանակում է ցանկացած գործողություն, որի արդյունքում արտադրանքը կամ դրա բաղադրիչներն օգտագործվում են ոչ որպես թափոն, այլ նորից են օգտագործվում՝ այն նպատակով, որի համար իրենք ստեղծվել են.

14. «մշակում» նշանակում է վերականգնման կամ հեռացման գործողություններ, որի մեջ մտնում են վերականգնմանը կամ հեռացմանը նախորդող նախապատրաստական աշխատանքները.

15. «վերականգնում» նշանակում է ցանկացած գործողություն, որի արդյունքում հիմնականում առաջանում է այնպիսի թափոն, որը ծառայում է որևէ օգտակար նպատակի՝ փոխարինելով այլ նյութերի, որոնք այլապես կօգտագործվեին որևէ կոնկրետ գործառույթ իրականացնելու նպատակով, կամ թափոնների, որոնք կարող են ընդհանրապես կատարել այդ գործառույթը գործարանում կամ տնտեսության մեջ : II հավելվածը սահմանում է վերականգնման գործողությունների ոչ ամբողջական ցուցակը.

16. «վերաօգտագործման նախապատրաստում» նշանակում է վերականգնման գործողությունների ստուգում, մաքրում և վերանորոգում, որի արդյունքում արտադրանքը կամ արտադրանքի բաղադրիչները, որոնք թափոն են դարձել, նախապատրաստվում են վերաօգտագործման համար՝ առանց նախնական մշակում անցնելու.

17. «վերամշակում» նշանակում է ցանկացած վերականգնման գործողություն, որի արդյունքում թափոնային նյութերը վերամշակվում են և վերածվում արտադրանքի կամ նյութերի՝ սկզբնական կամ այլ նպատակներով: Այն ներառում է օրգանական նյութերի վերամշակում, սակայն չի ներառում էներգիայի վերականգնում և վերամշակում, որի

արդյունքում ստացվում են այնպիսի նյութեր, որոնք կարող են օգտագործվել որպես վառելիք կամ վերալցման գործողություններում.

18. «նավթի թափոնների կրկնակի առաջացում» նշանակում է ցանկացած վերամշակման գործողություն, որի շնորհիվ նավթի հումք կարող է առաջանալ նավթի թափոնների մաքրման, մասնավորապես, ադտոտիչները, օքսիդացնող արտադրանքը և նման նավթի մեջ պարունակվող հավելանյութերը հեռացնելու միջոցով.

19. «թափոնի հեռացում» նշանակում է ցանկացած գործողություն, որը վերականգնում չէ, եթե նույնիսկ այդ գործողությունը նյութի կամ էներգիայի առումով, որպես երկրորդային հետևանք, բարելավման ազդեցություն ունի :

I հավելվածը սահմանում է թափոնների հեռացման գործողությունների ոչ ամբողջական ցուցակը.

20. «հասանելի լավագույն տեխնիկաներ» նշանակում են հասանելի լավագույն այնպիսի տեխնիկաներ, որոնք սահմանված են 96/61/ԵՃ հրահանգի 2(11) հոդվածով:

Հոդված 4

Թափոնների դասակարգումը

1. Թափոնների կանխարգելմանը և կառավարմանը վերաբերող օրենսդրության և քաղաքականության մեջ կիրառվում է ըստ առաջնայնության թափոնների դասակարգման հետևյալ հերթականությունը՝

ա) կանխարգելումը.

բ) վերաօգտագործման նախապատրաստումը.

գ) վերամշակումը.

դ) այլ վերականգնում, օրինակ՝ էներգիայի վերականգնումը. և

ե) թափոնների հեռացումը:

2. 1-ին պարբերության մեջ նշված թափոնների դասակարգումը կիրառելիս՝ անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում՝ խրախուսելու համար այնպիսի տարբերակները, որոնք կապահովեն շրջակա միջավայրի համար լավագույն ընդհանուր ազդեցությունը: Այն կարող է պահանջել, որ որոշակի թափոններ չմտնեն դասակարգման

մեջ, եթե դա արդարացված է շահագործման շրջանի նկատառումներով՝ կապված այդ թափոնի առաջացման և կառավարման ընդհանուր ազդեցությունների հետ:

Անդամ պետություններն ապահովում են, որ թափոններին վերաբերող օրենսդրության և քաղաքականության մշակումը լինի լիովին թափանցիկ գործընթաց՝ պահպանելով քաղաքացիներին և շահագրգիռ անձանց հետ խորհրդակցության և նրանց այդ գործընթացում ներգրավելու գոյություն ունեցող ազգային կանոնները:

Անդամ պետությունները հաշվի են առնում նախագուշական և կայունության, տեխնիկական իրագործելիության և տնտեսական կենսունակության, ռեսուրսների պաշտպանության սկզբունքները, որոնք առնչվում են շրջակա միջավայրի ընդհանուր պաշտպանությանը, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու առողջության, տնտեսական և սոցիալական ազդեցությունների ընդհանուր ազդեցությունները՝ 1-ին և 13-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 5

Կողմնակի արտադրանքը

1. Արտադրական պրոցեսի ընթացքում ստացված նյութը կամ առարկան, եթե այդ արտադրության հիմնական նպատակը տվյալ նյութի կամ առարկայի արտադրությունը չէ, կարող է թափոն չհամարվել, որը նշված է 3-րդ հոդվածի 1-ին կետում, այլ համարվի կողմնակի արտադրանք՝ պայմանով, որ բավարարված լինեն հետևյալ պայմանները՝

ա) տվյալ նյութը կամ առարկան հաստատ կրկին կօգտագործվի.

բ) նյութը կամ առարկան կարող է ուղղակիորեն օգտագործվել առանց հետագա մշակման՝ բացի արդյունաբերական բնականոն պրոցեսից.

գ) նյութը կամ առարկան արտադրվում է որպես արտադրական պրոցեսի ինտեգրալ մաս.
և

դ) հետագա օգտագործումն օրինական է, այսինքն, նյութը կամ առարկան բավարարում է արտադրանքի, շրջակա միջավայրի առողջության պաշտպանության բոլոր համապատասխան պահանջները՝ կիրառության տվյալ դեպքի համար: Այն նաև չպետք է հանգեցնի շրջակա միջավայրի կամ մարդու առողջության համար ընդհանուր բացասական ազդեցությունների:

2. Ելնելով 1-ին պարբերության մեջ սահմանված պայմաններից՝ կարելի է միջոցներ ընդունել՝ որոշելու համար, թե որ չափորոշիչները պետք է բավարարվեն որոշակի նյութերի կամ առարկաների դեպքում, որոնք համարվում են կողմնակի արտադրանք և ոչ թե թափոն՝ 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն: Այդ միջոցները, որոնք նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու և, մասնավորապես, այն լրացնելու նպատակով, պետք է ընդունվեն 39(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորման ընթացակարգի համաձայն:

Հոդված 6

Ոչ թափոնային կարգավիճակը

1. Որոշ սահմանված թափոններ դադարում են թափոն լինելուց 3-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, եթե դրանք ենթարկվել են վերականգնման՝ ներառյալ վերամշակման, շահագործման և համապատասխանում են հատուկ չափորոշիչներին, որոնք մշակվել են հետևյալ պայմանների համաձայն՝

ա) նյութը կամ առարկան ընդհանուր առմամբ օգտագործվում է որոշակի նպատակների համար.

բ) նման նյութի կամ առարկայի համար գոյություն ունի շուկա կամ պահանջարկ.

գ) նյութը կամ առարկան բավարարում է հատուկ նպատակների տեխնիկական պահանջները և համապատասխանում է տվյալ արտադրանքի գծով գործող օրենսդրությանն ու ստանդարտներին.

դ) տվյալ նյութի կամ առարկայի օգտագործումը չի առաջացնում շրջակա միջավայրի և մարդու առողջության համար ընդհանուր բացասական ազդեցություններ:

Այդ չափորոշիչները, անհրաժեշտության դեպքում, ներառում են սահմանային արժեքներ՝ աղտոտիչների համար և հաշվի են առնում տվյալ նյութի կամ առարկայի՝ շրջակա միջավայրի համար բացասական բոլոր հնարավոր ազդեցությունները:

2. Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները, որոնք առնչվում են 1-ին պարբերության մեջ սահմանված չափորոշիչներին և որոնք սահմանում են թափոնի այն տեսակը, որին վերաբերում է տվյալ չափորոշիչը, պետք է ընդունվեն 39(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Ոչ թափոնային հատուկ

չափորոշիչները պետք է կիրառվեն, ի թիվս այլոց, առնվազն, ագրեգատների, թղթի, ապակու, մետաղի, անվադողերի և տեքստիլի նկատմամբ:

3. Այն թափոնը, որը դադարում է թափոն համարվելուց 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն, դադարում է նաև թափոն համարվելուց վերականգնման և վերամշակման նպատակների համար, որոնք սահմանված են 94/62/ԵՀ, 2000/53/ԵՀ, 2002/96/ԵՀ և 2006/66/ԵՀ հրահանգներում և Համայնքի այլ համապատասխան օրենսդրության մեջ, եթե այդ օրենսդրության մեջ սահմանված՝ վերամշակմանը կամ վերականգնմանը վերաբերող պահանջները բավարարված են:

4. Եթե չափորոշիչներ սահմանված չեն Համայնքի մակարդակով՝ 1-ին և 2-րդ պարբերություններում սահմանված ընթացակարգի համաձայն, անդամ պետությունները, ըստ առանձին դեպքերի, որոշում են, թե տվյալ թափոնը պետք է համարվի թափոն, թե ոչ՝ հաշվի առնելով գործող նախադեպային իրավունքը: Նրանք ծանուցում են Հանձնաժողովին նման որոշումների մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ տեխնիկական ստանդարտների և կարգավորումների ու տեղեկատվական հասարակության համար ծառայություններին վերաբերող կանոնների ոլորտում տեղեկատվության տրամադրման համար ընթացակարգ սահմանող՝ 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի [24] համաձայն, եթե այդ հրահանգը նման պահանջներ է ներկայացնում:

Հոդված 7

Թափոնների ցանկը

1. Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը, որոնք վերաբերում են 2000/532/ԵՀ որոշմամբ սահմանված թափոնների ցանկի թարմացմանը, պետք է ընդունվեն 39(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Թափոնների ցուցակը ներառում է թունավոր թափոնները և հաշվի է առնում թափոնի ծագումն ու բաղադրությունը, իսկ, անհրաժեշտության դեպքում՝ թունավոր նյութերի խտության սահմանային արժեքները: Թափոնների ցուցակը պարտադիր է՝ թափոնի տեսակը որոշելու համար, եթե այն պետք է սահմանվի որպես թունավոր: Եթե ցուցակում նյութ կամ առարկա է ներառվել, ապա դա չի նշանակում, որ այն թափոն է բոլոր հանգամանքներում: Նյութը կամ առարկան

համարվում է թափոն, եթե միայն այն համապատասխանում է 3-րդ հոդվածի 1-ին կետի սահմանմանը:

2. Անդամ պետությունը թափոնը կարող է վտանգավոր համարել, եթե այն ունի III հավելվածում նշված հատկանիշներից որևէ մեկը կամ մի քանիսը՝ եթե նույնիսկ այն այդպիսին չի երևում՝ թափոնների ցուցակի համաձայն: Անդամ պետություններն առանց հապաղման ծանուցում են Հանձնաժողովին նման դեպքերի մասին: Տվյալ պետությունը նշում է այդ մասին 37(1) հոդվածում սահմանված հաշվետվության մեջ և համապատասխան բոլոր տեղեկությունների հետ տրամադրում է Հանձնաժողովին: Ստացված ծանուցման համատեքստում ցուցակը վերանայվում է, որպեսզի դրա հարմարեցման մասին որոշում ընդունվի:

3. Եթե անդամ պետությունն ապացույցներ ունի, որ որոշ թափոններ, որոնք հայտնվել են վտանգավոր թափոնների ցուցակում, չունեն III հավելվածում նշված հատկություններից որևէ մեկը, սվյալ պետությունը կարող է այդ թափոնը համարել ոչ վտանգավոր: Անդամ պետություններն առանց հապաղման ծանուցում են Հանձնաժողովին նման դեպքերի մասին և Հանձնաժողով ներկայացնում անհրաժեշտ ապացույցները: Հաշվի առնելով ստացված ծանուցումները՝ ցուցակը վերանայվում է, որպեսզի որոշում ընդունվի դրա հարմարեցման մասին:

4. Վտանգավոր թափոնը՝ որպես ոչ վտանգավոր վերադասակարգում, չի կարելի կատարել թափոնը լուծելու կամ խառնելու միջոցով՝ նպատակ հետապնդելով ցածրացնել թունավոր նյութերի պարունակության նախնական խտությունն այն մակարդակից ցածր, որից ներքև թափոնը որպես վտանգավոր չի սահմանվում:

5. Սույն հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը, որոնք վերաբերում են 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն հարմարեցման մասին որոշում ընդունելուն, ընդունվում են 39(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

6. Անդամ պետությունները թափոնը համարում են ոչ վտանգավոր՝ 1-ին պարբերության մեջ նշված թափոնի ցուցակի համաձայն:

7. Հանձնաժողովն ապահովում է, որ թափոնների ցուցակը և այդ ցուցակի ցանկացած վերանայում, հավուր պատշաճի, պահպանի պարզության, ըմբռնելիության և մատչելիության սկզբունքներն օգտագործողների, մասնավորապես, փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար:

ԳԼՈՒԽ II

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Հոդված 8

Արտադրողի ընդլայնված պատասխանատվությունը

1. Թափոնների վերաօգտագործումը և կանխարգելումը, վերամշակումն ու վերականգնումն ամրապնդելու նպատակով անդամ պետությունները կարող են ձեռնարկել օրենսդրական կամ ոչ օրենսդրական միջոցներ՝ ապահովելու համար, որ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը մասնագիտորեն բարելավում, արտադրում, մշակում, հարստացնում, վաճառում կամ ներմուծում է արտադրանք (արտադրանքի արտադրող), որպես արտադրող, ընդլայնված պարտավորություններ ունենա:

Նման միջոցները կարող են ներառել վերադարձված ապրանքի և այդ ապրանքների օգտագործումից հետո մնացած թափոնի ընդունում, ինչպես նաև թափոնի հետագա կառավարում և նման գործունեություն իրականացնելու համար ֆինանսական պատասխանատվություն: Այդ միջոցները կարող են պարտավորություն ներառել՝ հանրորեն հասանելի տեղեկատվության տրամադրման մասին, եթե այդ արտադրանքը հնարավոր է վերաօգտագործման ենթարկել կամ վերամշակել:

2. Անդամ պետությունները կարող են ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ խրախուսելու համար, որ արտադրանքը նախագծվի այնպես, որ նվազեցվի շրջակա միջավայրի ազդեցությունները և արտադրության ընթացքում թափոնների առաջացումը: Նրանք նաև կարող են համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ խրախուսելու համար արտադրանքի հետագա օգտագործումը, ինչպես նաև ապահովելու համար, որ թափոնի վերածված արտադրանքի վերականգնումը և հեռացումը տեղի ունենա 4-րդ և 13-րդ հոդվածների համաձայն:

Նման միջոցներով կարելի է խրախուսել, մասնավորապես, այն արտադրանքի բարելավումը, արտադրությունը և շուկայահանումը, որը հարմար է բազմակի օգտագործման նպատակով, որը տեխնիկապես ամուր է և որը, թափոնի վերածվելուց հետո, հարմար է՝ պատշաճ և ապահով վերականգնման ու շրջակա միջավայրի համար նպաստավոր հեռացման համար:

3. Արտադրողի ընդլայնված պատասխանատվությունը կիրառելիս՝ անդամ պետությունները հաշվի են առնում տեխնիկական իրագործելիությունը և տնտեսական կենսունակությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու առողջության և սոցիալական ընդհանուր ազդեցությունները՝ միևնույն ժամանակ ապահովելով ներքին շուկայի պատշաճ գործունեությունը:

4. Արտադրողի ընդլայնված պարտավորությունը կիրառվում է՝ չսահմանափակելով թափոնների կառավարման պարտավորությունը, ինչպես սահմանված է 15(1) հոդվածում և չխախտելով թափոնների հոսքերին հատուկ և արտադրանքին հատուկ՝ գործող օրենսդրությունը:

Հոդված 9

Թափոնների կանխարգելումը

Շահագրգիռ անձանց հետ խորհրդակցելուց հետո Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հետևյալ հաշվետվություններն է ներկայացնում, որին կից, հարկ եղած դեպքում, առաջարկներ են ներկայացվում՝ կանխարգելման գործողություններին ու 29-րդ հոդվածում նշված թափոնների կանխարգելման ծրագրերին աջակցելու նպատակով պահանջվող միջոցների մասին՝ ներառելով հետևյալը՝

ա) մինչև 2011 թվականի վերջը թափոնների առաջացման և թափոնների կանխարգելման մասշտաբների մասին միջանկյալ հաշվետվություն, ներառյալ արտադրանքի էկո-դիզայնի ձևավորման քաղաքականություն, որն անդրադառնում է թափոնների ստեղծմանը և թափոնի մեջ վտանգավոր նյութերի առկայությանը՝ նպատակ հետապնդելով խթանելու այն տեխնոլոգիաները, որոնք շեշտադրում են կայուն, բազմակի օգտագործման և վերամշակվող արտադրանքը.

բ) մինչև 2011 թվականի վերջը՝ գործողության պլանի ձևավորում՝ Եվրոպական մակարդակով լրացուցիչ աջակից միջոցների նպատակով, մասնավորապես, ձգտելով փոփոխել ներկայիս սպառողական մոդելները.

գ) մինչև 2014 թվականի վերջը՝ թափոնների կանխարգելման և ազդեցությունների վերացման նպատակների սահմանում 2020 թվականի համար՝ հենվելով հասանելի լավագույն պրակտիկայի վրա, անհրաժեշտության դեպքում վերանայելով 29(4) հոդվածում նշված ցուցիչները:

Հոդված 10

Վերականգնումը

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ թափոնները ենթարկվեն վերականգնման՝ 4-րդ և 13-րդ հոդվածների համաձայն:
2. 1-ին պարբերության պայմանները պահպանելու և վերականգնմանը օժանդակելու կամ այն բարելավելու նպատակով թափոնները հավաքվում են առանձին, եթե դա հնարավոր է տեխնիկապես, բնապահպանական առումով և տնտեսապես: Դրանք չպետք է խառնվեն այլ թափոնների և նյութերի հետ, որոնք այլ հատկություններ ունեն:

Հոդված 11

Վերաօգտագործումը և վերամշակումը

1. Անդամ պետությունները, հարկ եղած դեպքում, միջոցներ են ձեռնարկում՝ խթանելու համար արտադրանքի վերաօգտագործումը և վերաօգտագործման նախապատրաստումը, մասնավորապես, խրախուսելով վերաօգտագործման և վերանորոգման ցանցերի ստեղծումը և աջակցությունը, տնտեսական գործիքների, գնումների չափորոշիչների, քանակական նպատակների և այլ միջոցների օգտագործումը:

Անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում՝ խթանելու համար բարձր որակի վերամշակումը և, այդ նպատակով, ստեղծում են թափոնների առանձին հավաքման կետեր, եթե դա տեխնիկապես, բնապահպանության տեսանկյունից և տնտեսապես հնարավոր է և համապատասխանում է որակի անհրաժեշտ ստանդարտներին՝ վերամշակման համապատասխան ոլորտի համար:

10(2) հոդվածի համաձայն՝ մինչև 2015 թվականը հետևյալ թափոնների հավաքումը պետք է իրականացվի առանձին՝ թուղթ, մետաղ, պլաստմասսա և ապակի:

2. Սույն Հրահանգի նպատակները պահպանելու և ռեսուրսների օգտագործման բարձր արդյունավետության եվրոպական վերամշակող հասարակության սկզբունքին մոտենալու համար անդամ պետությունները ձեռնարկում են այնպիսի միջոցներ, որոնց նպատակն է ձեռք բերել հետևյալը՝

ա) մինչև 2020 թվականը վերաօգտագործման նախնական պատրաստումը և տնտեսություններից կամ այլ ծագման նյութերի (եթե այդ թափոնային հոսքերը նման են

տնտեսությունների թափոններին), օրինակ՝ մետաղի, պլաստմասսայի և ապակու վերամշակումն առնվազն ընդհանուր քաշի 50%-ով ավելացվում է.

բ) մինչև 2020 թվականը վերաօգտագործման նախնական պատրաստումը, վերամշակումը և նյութերի վերականգնումը, այդ թվում այլ նյութերով փոխարինելու նպատակով ոչ վտանգավոր շինարարությունների՝ թափոնների օգտագործմամբ գրունտով լցման գործողությունները և շինարարական թափոնները (բացառությամբ բնականորեն ստեղծվող նյութերը, որոնք սահմանված են թափոնների ցուցակի 17 05 04 կատեգորիայում), առնվազն ընդհանուր քաշի 70%-ով ավելացվում են:

3. Հանձնաժողովը սահմանում է մանրամասն կանոններ՝ կիրառման և հաշվարկման մեթոդների մասին՝ 2-րդ պարբերության նպատակների իրականացումը ստուգելու նպատակով՝ հաշվի առնելով «Թափոնների վիճակագրության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 2150/2002 կանոնակարգը (ԵՀ)[25]: Սրա մեջ մտնում է այն անդամ պետությունների համար անցումային ժամանակաշրջանները, որոնք 2008 թվականի դրությամբ վերամշակել են 2-րդ պարբերության մեջ նշված թափոնների որևէ կատեգորիայի 5 %-ից պակաս թափոն: Այն միջոցները, որոնք նախատեսված են լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, պետք է ընդունվեն՝ սույն Հրահանգի 39(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն պարունակող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

4. Ամենաուշը մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը՝ Հանձնաժողովն ուսումնասիրում է այդ միջոցները և 2-րդ պարբերության մեջ նշված նպատակները՝, անհրաժեշտության դեպքում այդ նպատակները խթանելու և թափոնների այլ հոսքերի համար նպատակներ սահմանելու համար: Հանձնաժողովի հաշվետվությունը, հարկ եղած դեպքում առաջարկի հետ միասին, ուղարկվում է Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ: Իր հաշվետվության մեջ Հանձնաժողովը հաշվի է առնում այդ նպատակները սահմանելու բնապահպանական, տնտեսական և սոցիալական համապատասխան ազդեցությունները

5. Յուրաքանչյուր երեք տարին մեկ՝ 37-րդ հոդվածի համաձայն, անդամ պետությունները Հանձնաժողով հաշվետվություն են ներկայացնում նպատակների ձեռքբերման մասին: Եթե նպատակները ձեռք չեն բերվում, այդ հաշվետվությունը հիմնավորում է ձախողման պատճառները և նշում այն գործողությունները, որոնք անդամ պետությունները մտադիր են ձեռնարկել՝ այդ նպատակները ձեռք բերելու համար:

Հոդված 12

Թափոնների հեռացումը

Անդամ պետությունները ապահովում են, որ եթե 10(1) հոդվածի համաձայն իրականացված վերականգնում չի կատարվում, թափոնները ենթարկվում են հեռացման՝ պահպանելով մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության մասին 13-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 13

Մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանությունը

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ թափոնների կառավարումն իրականացվի առանց վտանգելու մարդու առողջությունը, առանց վնաս հասցնելու շրջակա միջավայրին, մասնավորապես՝

- ա) առանց ջրին, օդին, հողին, բուսականությանը կամ կենդանիներին հասցվող վտանգի.
- բ) առանց խնդիրներ ստեղծելու՝ ձայնի կամ հոտի առումով. և
- գ) առանց բացասական ազդեցության ենթարկելու գյուղերը և հատուկ հետաքրքրության վայրերը:

Հոդված 14

Ծախսերը

1. Աղտոտողը վճարում է սկզբունքի համաձայն, թափոնների կառավարման ծախսերը կրում է թափոն արտադրողը կամ թափոն ունեցող՝ ներկայիս կամ նախկին անձը կամ կազմակերպությունը:

2. Անդամ պետությունները կարող են որոշել, որ թափոնների կառավարման ծախսերը մասամբ կամ ամբողջովին վճարվեն թափոնի ծագման արտադրանքն արտադրողի կողմից և որ նման արտադրանք առաքողները կրեն այդ ծախսերի մի մասը:

ԳԼՈՒԽ III

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 15

Թափոնների կառավարման համար պատասխանատվությունը

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ թափոնի ծագման արտադրողը կամ թափոն ունեցող այլ անձինք կամ կազմակերպություններն իրենք իրականացնեն թափոնի մշակումը, կամ որ մշակումն իրականացվի դիլերի կամ թափոնների մշակում իրականացնող հաստատության կամ կազմակերպության կողմից կամ ձեռնարկվի մասնավոր կամ պետական աղբ հավաքող կազմակերպության կողմից՝ 4-րդ և 13-րդ հոդվածների համաձայն:

2. Եթե թափոնները, դրանք առաջացնողի կամ թափոն ունեցող անձի կամ կազմակերպության կողմից փոխանցվում են 1-ին պարբերության մեջ նշված որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ նախնական մշակման ենթարկելու նպատակով, ապա լրիվ վերականգնում կամ թափոնի հեռացում իրականացնելու պատասխանատվությունը՝ որպես կանոն, չի վերանում:

Չսահմանափակելով թիվ 1013/2006 կանոնակարգի (ԵՀ) գործողությունը՝ անդամ պետությունները սահմանում են պատասխանատվության պայմանները և որոշում են ընդունում այն մասին, թե որ դեպքերում են թափոն առաջացնողը պատասխանատու մշակման ամբողջ շղթայի համար, որ դեպքերում է արտադրողի և թափոն ունեցող անձի կամ կազմակերպության միջև պատասխանատվությունը կիսվում կամ փոխանցվում մշակման շղթայի այլ գործիչների:

3. 8-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները կարող են որոշել, որ թափոնների կառավարում իրականացնելու պատասխանատվությունը մասամբ կամ ամբողջությամբ կրի արտադրողը, որի մոտ առաջացել է տվյալ թափոնը և որ այդ թափոնի դիստրիբյուտորները կիսեն այդ պատասխանատվությունը:

4. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ իրենց տարածքում հաստատությունները կամ ձեռնարկությունները, որոնք հավաքում կամ տեղափոխում են թափոնները՝ որպես մասնագիտական գործունեության ձև, հավաքված կամ տեղափոխված թափոններն առաքեն թափոնների մշակման համապատասխան կայաններ՝ պահպանելով 13-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 16

Ինքնուրույնության և մոտարկման սկզբունքները

1. Անդամ պետությունները համապատասխան միջոցներ են ձեռնարկում այլ անդամ պետությունների հետ համատեղ, եթե նման միջոցներն անհրաժեշտ և նախընտրելի են՝ ստեղծելու համար թափոնների հեռացման կայանների ինտեգրված և համապատասխան ցանցեր ու բազմաբնույթ քաղաքային թափոնների վերականգնման կայաններ, որոնք հավաքվում են մասնավոր տնտեսություններից, ներառյալ եթե հավաքումը ներառում է այլ արտադրողների կողմից արտադրվող նմանատիպ թափոնները՝ հաշվի առնելով վերջին տեխնիկական հնարավորությունները:

Շեղում կատարելով թիվ 1013/2006 կանոնակարգից (ԵՀ)՝ անդամ պետությունները կարող են իրենց ցանցերը պաշտպանելու համար սահմանափակել դեպի թափոնների այրման վառարաններ առաքվող թափոնները, որոնք դասակարգված են որպես վերականգնում, եթե հայտնի է, որ նման առաքումները կարող են պետական աղբ ստեղծել, որը կարող էր հեռացվել կամ մշակվել այնպիսի եղանակով, որը չի համապատասխանում թափոնների կառավարման պլաններին: Անդամ պետությունները նման որոշումների մասին ծանուցում են Հանձնաժողովին: Անդամ պետությունները կարող են նաև սահմանափակել թափոնների առաքվող խմբաքանակները բնապահպանական նկատառումներով, ինչպես սահմանված է թիվ 1013/2006 կանոնակարգով (ԵՀ):

2. Ցանցը նախագծվում է այնպես, որ Համայնքը՝ որպես ամբողջություն, դառնա ինքնուրույն թափոնների հեռացման, ինչպես նաև 1-ին հոդվածում նշված թափոնների վերականգնման հարցում: Այն նաև նպատակ ունի հնարավորություն տալ անդամ պետություններին ձգտելու այդ նպատակին պետական մակարդակով՝ հաշվի առնելով աշխարհագրական հանգամանքները կամ թափոնների որոշ տեսակների համար մասնագիտացված կայաններ ստեղծելու անհրաժեշտությունը:

3. Ցանցը նաև հնարավորություն է տալիս հեռացված թափոնները կամ 1-ին պարբերության մեջ նշված թափոնները վերականգնել ամենամոտիկ տեղակայված կայանում՝ համապատասխան մեթոդների և տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ շրջակա միջավայրի և հանրային առողջության համար բարձր մակարդակի պաշտպանություն ապահովելու նպատակով :

4. Մոտարկման և ինքնուրույնության սկզբունքները չեն ենթադրում, որ յուրաքանչյուր անդամ պետություն թափոնների վերջնական վերականգնման կայանների ամբողջական ցանց պետք է ունենա տվյալ անդամ պետության շրջանակներում:

Հոդված 17

Վտանգավոր թափոնների վերահսկումը

Անդամ պետություններն անհրաժեշտ գործողություններ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ վտանգավոր թափոնների արտադրությունը, վերահսկումը և փոխադրումը, ինչպես նաև դրանց պահեստավորումն ու մշակումն իրականացվեն այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն շրջակա միջավայրի և մարդու առողջության պաշտպանությունը՝ 13-րդ հոդվածի դրույթները պահպանելու նպատակով: Այդ գործողություններն ապահովում են նաև արտադրությունից մինչև վերջնական տեղակայման վայրը հետագծելիությունը և վտանգավոր թափոնների վերահսկումը՝ 35-րդ և 36-րդ հոդվածների պահանջները պահպանելու նպատակով:

Հոդված 18

Վտանգավոր թափոններն իրար խառնելու արգելքը

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ վտանգավոր թափոնները չխառնվեն իրար կամ այլ կատեգորիայի վտանգավոր թափոնների, կամ այլ տեսակի թափոնների, կամ նյութերի հետ: Իրար խառնելը նշանակում է նաև թունավոր նյութերի լուծումը:

2. 1-ին պարբերությունից շեղում կատարելով՝ անդամ պետությունները կարող են թույլատրել իրար խառնելը՝ պայմանով, որ՝

ա) խառնումն իրականացվում է որևէ հաստատության կամ կազմակերպության կողմից, որը, 23-րդ հոդվածի համաձայն, թույլտվություն է ստացել.

բ) 13-րդ հոդվածի դրույթները պահպանվում են և թափոնների կառավարման բացասական ազդեցությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա չի ավելանում. և

գ) խառնումն իրականացվում է առկա լավագույն տեխնիկական միջոցներով:

3. Պահպանելով տեխնիկական և տնտեսական իրագործելիության չափորոշիչներն այն դեպքում, երբ վտանգավոր թափոնը ենթարկվել է խառնման՝ 1-ին պարբերությանը հակառակ, հնարավորության և անհրաժեշտության դեպքում պետք է առանձնացում կատարվի՝ 13-րդ հոդվածի պայմանները պահպանելու նպատակով:

Հոդված 19

Վտանգավոր թափոնների մակնշումը

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ հավաքման, փոխադրման և ժամանակավոր պահեստավորման ընթացքում վտանգավոր թափոնները փաթեթավորվեն և մակնշվեն՝ միջազգային ու Համայնքի գործող ստանդարտների համաձայն:

2. Եթե վտանգավոր թափոնները տեղափոխվում են անդամ պետության սահմաններում, դրանց կցվում է ինքնությունը հաստատող փաստաթուղթ, որը կարող է էլեկտրոնային ձևաչափով լինել և պարունակի թիվ 1013/2006 կանոնակարգի (ԵՀ) IB հավելվածում սահմանված համապատասխան տվյալները:

Հոդված 20

Տնտեսությունների կողմից արտադրվող վտանգավոր թափոնները

17-րդ, 18-րդ, 19-րդ և 35-րդ հոդվածները չեն կիրառվում իրար խառնված թափոնների նկատմամբ, որոնք առաջացել են տնտեսություններում:

19-րդ և 35-րդ հոդվածները չեն կիրառվում վտանգավոր թափոնների առանձին բաժինների նկատմամբ, որոնք առաջացել են տնտեսություններում, մինչև դրանք չընդունվեն հավաքման, հեռացման կամ վերականգնման նպատակով՝ 23-րդ կամ 26-րդ հոդվածների համաձայն թույլտվություն ստացած կամ գրանցված հաստատության կամ կազմակերպության կողմից:

Հոդված 21

Նավթի/յուղի թափոնները

1. Չսահմանափակելով վտանգավոր թափոնների կառավարմանը վերաբերող պարտավորությունները, որոնք սահմանված են 18-րդ և 19-րդ հոդվածներում, անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ՝

ա) նավթի թափոնները հավաքվեն առանձին, եթե դա տեխնիկապես հնարավոր է.

բ) նավթի թափոնները մշակվեն՝ 4-րդ և 13-րդ հոդվածների համաձայն.

գ) եթե տեխնիկապես հնարավոր և տնտեսապես նպատակահարմար է, տարբեր հատկանիշներ ունեցող նավթի թափոնները չխառնվեն իրար, իսկ նավթի թափոնները չխառնվեն թափոնների կամ նյութերի այլ տեսակների հետ, եթե նման խառնուրդ խոչընդոտ է դրանց մշակման համար:

2. Նավթի թափոնների առանձին հավաքման և դրանց պատշաճ մշակման նպատակով անդամ պետությունները, իրենց ազգային պահանջների համաձայն, կարող են կիրառել լրացուցիչ միջոցներ, ինչպես օրինակ՝ տեխնիկական պահանջներ, արտադրողի նկատմամբ պարտավորություն, տնտեսական գործիքներ կամ կամավոր հիմունքով պայմանագրեր:

3. Եթե ազգային օրենսդրության համաձայն՝ նավթի թափոնները պետք է անցնեն վերականգնման գործընթաց, անդամ պետությունները կարող են սահմանել, որ նման թափոնները վերականգնվեն, եթե դա տեխնիկապես հնարավոր է, իսկ երբ կիրառվում են թիվ 1013/2006 (ԵՀ) կանոնակարգի 11-րդ կամ 12-րդ հոդվածները՝ նրանք սահմանափակում են նավթի թափոնների միջսահմանային առաքումների՝ իրենց տարածքից դեպի այրման կամ այրման և այլ մշակման կայաններ՝ առաջնայնություն տալով նավթի թափոնների վերականգնմանը:

Հոդված 22

Կենսաթափոնները

Անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ, հարկ եղած դեպքում 4-րդ և 13-րդ հոդվածների համաձայն, խրախուսելու համար՝

ա) կենսաթափոնների առանձին հավաքումը՝ դրանք կենսաբանական պարարտանյութերի վերածելու և խմորման նպատակով.

բ) կենսաթափոնների մշակումն այնպես, որ պահպանվի շրջակա միջավայրի բարձր մակարդակի պաշտպանությունը.

գ) շրջակա միջավայրի տեսանկյունից ապահով նյութերի օգտագործումը, որոնք ստացվել են կենսաթափոններից:

Հանձնաժողովն իրականացնում է կենսաթափոնների կառավարման մասին գնահատում՝ հարկ եղած դեպքում առաջարկ ներկայացնելու նպատակով: Գնահատումն ուսումնասիրում է կենսաթափոնների կառավարման նպատակով և կենսաբանական պարարտանյութերի ու կենսաթափոնների խմորման որակային չափորոշիչների նվազագույն պահանջներ սահմանելու հնարավորությունը՝ երաշխավորելու համար մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակ:

ԳԼՈՒԽ IV

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ

Հոդված 23

Թույլտվությունների տրամադրումը

1. Անդամ պետությունները պահանջում են այն հաստատություններից և կազմակերպություններից, որոնք մտադիր են իրականացնել թափոնների մշակում, իրավասու մարմնի կողմից թույլտվություն ձեռք բերել :

Նման թույլտվությունները սահմանում են առնվազն հետևյալը՝

ա) թափոնների տեսակը և քանակությունները, որոնք կարող են վերամշակման ենթարկվել.

բ) թույլատրված յուրաքանչյուր գործողության տեսակի համար՝ տեխնիկական և այլ պահանջներ, որոնք հատուկ են տվյալ տարածքին.

գ) նախաձեռնվող անվտանգության և նախազգուշական միջոցները.

դ) գործողության յուրաքանչյուր տեսակի համար օգտագործվող մեթոդը.

ե) դիտանցման և վերահսկման այն գործողությունները, որոնց անհրաժեշտությունը կա.

զ) գործողությունն ավարտելու և դրանից հետո ձեռնարկվող խնամքի վերաբերյալ դրույթները, որոնց անհրաժեշտությունը կա:

2. Թույլտվությունները կարող են տրամադրվել հատուկ ժամկետներով և կարող են երկարաձգվել:

3. Եթե իրավասու մարմինը գտնում է, որ մշակման նախատեսված մեթոդը անթույլատրելի է բնապահպանական տեսանկյունից, մասնավորապես, եթե այն չի պահպանում 13-րդ հոդվածի պահանջները, այն կարող է թույլտվություն չտրամադրել:

4. Էներգիա վերականգնելու նպատակով այրում կամ այրումից բացի այլ մեթոդով մշակում կատարելու համար տրվող թույլտվությունը պահանջում է, որ էներգիայի վերականգնումը տեղի ունենա էներգիայի արդյունավետության բարձր մակարդակի ապահովմամբ:

5. Պայմանով, որ սույն հոդվածի պահանջները պահպանվեն, ազգային և Համայնքի այլ օրենսդրության համաձայն տրամադրված թույլտվությունները կարող են տրվել 1-ին պարբերության համաձայն պահանջվող թույլտվության հետ համատեղ և, երկուսը միասին, կազմում են մեկ ընդհանուր թույլտվություն, եթե նման ձևաչափը կանխում է տեղեկատվության անտեղի կրկնությունը և տնտեսավարող սուբյեկտի կամ իրավասու մարմնի կողմից աշխատանքի կրկնությունը:

Հոդված 24

Թույլտվության պահանջներից ազատման դեպքերը

Անդամ պետությունները կարող են հաստատություններին կամ կազմակերպություններին ազատել 23(1) հոդվածում սահմանված պահանջից հետևյալ գործողությունների դեպքում՝

ա) իրենց սեփականություն հանդիսացող անվտանգ թափոնների հեռացումն արտադրության վայրում. կամ

բ) թափոնների վերականգնումը:

Հոդված 25

Պարտավորություններից ազատման պայմանները

1. Եթե անդամ պետությունը ցանկանում է արտոնել պարտավորություններից ազատում, ինչպես նախատեսված է 24-րդ հոդվածում, այն գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանում է ընդհանուր կանոններ՝ ըստ պարտավորություններից ազատման ենթակա թափոնի տեսակի և քանակության ու ըստ մշակման մեթոդի:

Այդ կանոնները նախատեսված են՝ ապահովելու համար, որ թափոնները մշակվեն 13-րդ հոդվածի համաձայն: 24-րդ հոդվածի ա) կետում նշված թափոնների հեռացման դեպքում այդ կանոնները առկա լավագույն տեխնոլոգիաների օգտագործում պետք է նախատեսեն :

2. 1-ին պարբերության մեջ սահմանված ընդհանուր կանոններից բացի՝ անդամ պետությունները վտանգավոր թափոնների դեպքում պարտավորություններից ազատման մասին սահմանում են հատուկ պայմաններ՝ այդ թվում, ըստ գործունեության տեսակի, ինչպես նաև վերականգնման տարբեր ձևեր իրականացնելու համար սահմանում են անհրաժեշտ այլ պահանջներ, իսկ անհրաժեշտության դեպքում սահմանում են թափոններում վտանգավոր նյութերի բաղադրության և արտանետման սահմանային արժեքը:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն սահմանված ընդհանուր կանոնների մասին:

Հոդված 26

Գրանցումը

Այն դեպքում, երբ թույլտվության պահանջը պարտադիր չէ, անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը կատարի հետևյալի գրանցում՝

ա) հաստատություններ կամ կազմակերպություններ, որոնք հավաքում կամ տեղափոխում են թափոններ՝ որպես մասնագիտական գործունեության ձև.

բ) դիլերներ կամ միջնորդներ. և

գ) հաստատություններ կամ կազմակերպություններ, որոնք ազատված են թույլտվություն ստանալու պահանջից՝ 24-րդ հոդվածի համաձայն:

Եթե հնարավոր է, իրավասու մարմնի մոտ արդեն առկա տվյալներն օգտագործվում են գրանցման նպատակով համապատասխան տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով՝ նվազեցնելու համար վարչարարությունը:

Հոդված 27

Նվազագույն ստանդարտները

1. Մշակում իրականացնելու նպատակով նվազագույն տեխնիկական ստանդարտները, որոնց համաձայն պետք է թույլտվություն տրամադրվի՝ 23-րդ հոդվածի համաձայն, կարող են ընդունվել, եթե կան փաստեր, որոնց համաձայն, մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանությունը կբարելավվի նման նվազագույն ստանդարտների կիրառումից: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 39(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Նման նվազագույն ստանդարտները վերաբերում են թափոնների մշակման միայն այն գործողություններին, որոնք չեն կարգավորվում 96/61/ԵՀ հրահանգով կամ նպատակահարմար չեն, որպեսզի կարգավորվեն այդ հրահանգով:

3. Նման նվազագույն ստանդարտները՝

ա) ուղղված են թափոնների մշակման արդյունքում շրջակա միջավայրին հիմնական ազդեցություններին.

բ) ապահովում են, որ թափոնները մշակվեն 13-րդ հոդվածի համաձայն.

գ) հաշվի են առնում առկա լավագույն տեխնոլոգիական միջոցները. և

դ) հարկ եղած դեպքում ներառում են մշակման որակի և տեխնոլոգիական պրոցեսի պահանջների վերաբերյալ տարրեր:

4. 26-րդ հոդվածի ա) և բ) կետերի համաձայն գրանցում պահանջող գործողություններին նվազագույն ստանդարտներն ընդունվում են, եթե հիմնավորված է, որ մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության կամ ներքին շուկայում խաթարումից խուսափելու առումով օգուտներ ձեռք կբերվեն նման նվազագույն ստանդարտներից, մասնավորապես տարրեր ներառելով թափոն հավաքողների, տեղափոխողների, դիլերների կամ միջնորդների տեխնիկական որակավորման առումով:

Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 39(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

ԳԼՈՒԽ V

ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Հոդված 28

Թափոնների կառավարման ծրագրերը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց իրավասու մարմինները, 1-ին, 4-րդ, 13-րդ և 16-րդ հոդվածների համաձայն, հաստատում են թափոնների կառավարման մեկ կամ մի քանի ծրագրեր:

Այդ ծրագրերն առանձին կամ միասին վերցրած կարգավորում են համապատասխան անդամ պետության ամբողջ աշխարհագրական տարածքը:

2. Թափոնների կառավարման ծրագրերը վերլուծում են թափոնների կառավարման առկա իրավիճակը տվյալ աշխարհագրական միավորի շրջանակում, ինչպես նաև սահմանում են միջոցներ, որոնք պետք է ձեռնարկվեն՝ բարելավելու համար շրջակա միջավայրի համար բարենպաստ նախնական պատրաստման աշխատանքները վերաօգտագործման, վերամշակման, վերականգնման և թափոնները հեռացնելու նպատակով: Այդ պլանները նաև վերլուծում են, թե տվյալ պլանը ինչպես կարող է աջակցել նպատակների իրականացմանը և սույն Հրահանգի դրույթների պահպանմանը:

3. Թափոնների կառավարման ծրագրերը, հարկ եղած դեպքում և հաշվի առնելով պլանի շրջանակում ներգրավված տարածքի աշխարհագրական մակարդակն ու տարածվածությունը, ներառում են առնվազն հետևյալը՝

ա) տվյալ տարածքում առաջացող թափոնի տեսակը, քանակությունը և ծագումը, տվյալ ազգային տարածքից կամ դեպի այդ տարածք թափոնների հնարավոր առաքումները, ինչպես նաև ապագայում թափոնների հոսքերի զարգացումների գնահատումը:

բ) թափոնների հավաքման գոյություն ունեցող ծրագրերը և թափոնների հեռացման ու վերականգնման հիմնական կայանները՝ ներառյալ նավթի թափոնների, վտանգավոր

թափոնների կամ թափոնների հոսքերի համար ձեռնարկվող հատուկ միջոցառումները, որոնք կարգավորվում են Համայնքի օրենսդրությամբ.

գ) թափոնների հավաքման նոր ծրագրերի գնահատումը, գոյություն ունեցող թափոնների կայանների փակումը, թափոնների կայանների այլ ենթակառուցվածքներ, 16-րդ հոդվածի համաձայն, և հարկ եղած դեպքում, դրանցում կատարված ներդրումները.

դ) տեղանքն ընտրելու չափորոշիչների մասին և թափոնների հետագա հեռացման կամ վերականգնման հիմնական կայանների հնարավորությունների մասին բավարար տեղեկատվություն.

ե) թափոնների կառավարման ընդհանուր քաղաքականությունները, ներառյալ թափոնների կառավարման ծրագրված տեխնոլոգիաները և մեթոդները կամ քաղաքականությունները, որոնք կառավարման հատուկ խնդիրներ են ներկայացնում:

4. Թափոնների կառավարման ծրագրերը, հաշվի առնելով ծրագրված շրջանակում ներգրավված տարածքի աշխարհագրական մակարդակը և տարածվածությունը, կարող են ներառել առնվազն հետևյալը՝

ա) թափոնների կառավարմանը վերաբերող կազմակերպչական հայեցակետերը՝ ներառյալ պատասխանատվության բաշխումը պետական և մասնավոր սուբյեկտների միջև, որոնք իրականացնում են թափոնների կառավարումը.

բ) տնտեսական և այլ գործիքների օգտակարության ու համապատասխանության գնահատում թափոններին առնչվող տարաբնույթ խնդիրները լուծելու հարցում՝ հաշվի առնելով ներքին շուկայի սահուն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունը.

գ) իրազեկության քարոզարշավների օգտագործումը և տեղեկատվության տրամադրումը, որոնք հասցեագրված են լայն հասարակությանն ու սպառողների որոշակի խմբին.

դ) տնականորեն ադոտոված թափոնների հեռացման վայրեր և դրանք վերականգնելու միջոցները:

5. Թափոնների կառավարման ծրագրերը համապատասխանում են թափոնների ծրագրման պահանջներին, որոնք սահմանված են 94/62/ԵՀ հրահանգի 14-րդ հոդվածում և 1999/31/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածում նշված՝ աղբավայրերում կենսաբանորեն քայքայվող թափոնները կրճատելու մասին ռազմավարությանը,

Հոդված 29

Թափոնների կանխարգելման ծրագրերը

1. 1-ին և 4-րդ հոդվածների համաձայն՝ անդամ պետությունները սահմանում են թափոնների կանխարգելման ծրագրեր՝ ամենաուշը մինչև 2013 թվականի դեկտեմբերի 12-ը:

Նման նախագծերը ներառվում են կա՛մ թափոնների կառավարման ծրագրեր, որոնք սահմանված են 28-րդ հոդվածում, կա՛մ հարկ եղած դեպքում՝ բնապահպանական քաղաքականությունների ծրագրերում կամ էլ գործում են որպես առանձին ծրագրեր: Եթե նման ծրագրերից մեկը ներառվում է թափոնների կառավարման ծրագրում կամ մեկ այլ նախագծում, թափոնների կանխարգելման միջոցները հստակ սահմանվում են:

2. 1-ին պարբերության մեջ սահմանված նախագծերը սահմանում են թափոնների կանխարգելման նպատակներ: Անդամ պետությունները նկարագրում են թափոնների կանխարգելման գործող միջոցները և գնահատում են IV հավելվածում նշված միջոցների նմուշների կամ այլ համապատասխան միջոցների օգտակարությունը:

Նման նպատակները և միջոցներն ուղղորդված են տնտեսական աճի և շրջակա միջավայրի վրա թափոնների առաջացման ազդեցությունների միջև կապ հաստատելուն:

3. Անդամ պետությունները սահմանում են հատուկ որակական կամ քանակական համապատասխան հենանիշեր՝ թափոնների կանխարգելման միջոցների համար՝ այդ միջոցների զարգացումները դիտանցելու կամ գնահատելու նպատակով և միննույն նպատակով կարող են սահմանել հատուկ որակական կամ քանակական նպատակներ կամ ցուցիչներ, որոնք նշված չեն 4-րդ պարբերությունում:

4. Թափոնների կանխարգելման միջոցների ցուցիչները կարող են ընդունվել 39(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

5. Հանձնաժողովը կարող է համակարգ ստեղծել՝ թափոնների կանխարգելման լավագույն փորձի մասին տեղեկատվություն փոխանակելու նպատակով և մշակել ուղեցույցներ՝ անդամ պետություններին օժանդակելու համար իրենց նախագծերի պատրաստման հարցում:

Հոդված 30

Ծրագրերի և նախագծերի գնահատումն ու վերանայումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ թափոնների կառավարման ծրագրերն ու թափոնների կանխարգելման նախագծերը գնահատվեն ու համապատասխանաբար փոփոխվեն առնվազն վեց տարին մեկ, հարկ եղած դեպքում՝ 9-րդ և 11-րդ հոդվածներին համապատասխան:
2. Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությանն առաջարկվում է իր տարեկան զեկույցում ներառել թափոնների կանխարգելման ծրագրերի իրականացման և արդյունքների առաջընթացի ամփոփագիր:

Հոդված 31

Պետական մասնակցությունը

Անդամ պետություններն ապահովում են, որ համապատասխան շահագրգիռ անձինք և մարմինները, ինչպես նաև լայն հասարակությունը հնարավորություն ունենան մասնակցելու թափոնների կառավարման ծրագրերի և թափոնների կանխարգելման նախագծերի մշակմանը, իսկ մշակումից հետո, որպեսզի դրանք հասանելի լինեն նրանց համար՝ 2003/35/ԵՀ հրահանգի համաձայն կամ, հարկ եղած դեպքում, «Շրջակա միջավայրի վրա որոշ ծրագրերի և նախագծերի ազդեցությունների գնահատման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի 2001/42/ԵՀ հրահանգի համաձայն [26]: Անդամ պետություններն այդ ծրագրերը և նախագծերը տեղադրում են հանրորեն հասանելի կայքէջում:

Հոդված 32

Համագործակցությունը

Անդամ պետությունները ըստ պատշաճի համագործակցում են համապատասխան այլ անդամ պետությունների և Հանձնաժողովի հետ 28-րդ և 29-րդ հոդվածների համաձայն թափոնների կառավարման ծրագրերի և թափոնների կանխարգելման նախագծերի մշակման հարցում:

Հոդված 33

Հանձնաժողով ներկայացվելիք տեղեկատվությունը

1. Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին 28-րդ և 29-րդ հոդվածներում նշված թափոնների կառավարման ծրագրերի և թափոնների կանխարգելման նախագծերի մասին, երբ հաստատում են դրանք և հետագա բոլոր փոփոխությունների մասին, որոնք կատարվում են ծրագրերում և նախագծերում:
2. Այդ ծրագրերի և նախագծերի ընդունման ու հետագա փոփոխությունների մասին տեղեկատվության ներկայացման ձևաչափն ընդունվում է 39(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ VI

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Հոդված 34

Ստուգումները

1. Այն հաստատությունները կամ կազմակերպությունները, որոնք թափոնների մշակման գործունեություն են իրականացնում և այն հաստատությունները կամ կազմակերպությունները, որոնք հավաքում կամ թափոններ են տեղափոխում՝ որպես մասնագիտական գործունեության մաս, ինչպես նաև միջնորդները և դիլերներն ու վտանգավոր թափոններ արտադրող հաստատությունները կամ կազմակերպությունները իրավասու մարմինների կողմից ենթարկվում են պարբերական ստուգումների :
2. Թափոնների հավաքման և տեղափոխման գործունեության ստուգումները ներառում են հավաքված կամ տեղափոխված թափոնի ծագումը, բնույթը, քանակությունը և առաքման վայրը:
3. Անդամ պետությունները կարող են հաշվի առնել Համայնքի էկո-կառավարման և աուդիտի համակարգի (ՀԷԿԱՀ) համաձայն ձեռք բերված գրանցումները, մասնավորապես ստուգումների հաճախականության և ինտենսիվության մասով:

Հոդված 35

Տվյալների վարումը

1. 23(1) հոդվածում նշված հաստատությունները կամ կազմակերպությունները, վտանգավոր թափոններ արտադրողները և մասնագիտական հիմունքով վտանգավոր թափոններ հավաքող կամ փոխադրող կամ որպես վտանգավոր թափոնների դիլեր կամ միջնորդ հանդիսացող հաստատությունները կամ կազմակերպություններն արձանագրում են թափոնի քանակությունը, բնույթը և ծագումը ժամանակագրական կարգով, իսկ, հարկ եղած դեպքում, արձանագրում են թափոնի առաքման վայրը, հավաքման հաճախականությունը, տրանսպորտի եղանակը և մշակման ակնկալվող մեթոդը: Նրանք այդ տեղեկությունները հասանելի են դարձնում իրավասու մարմիններին՝ պահանջի դեպքում:

2. Վտանգավոր թափոնների դեպքում արձանագրությունները պահպանվում են առնվազն երեք տարի՝ բացառությամբ այն հաստատությունների կամ կազմակերպությունների, որոնք վտանգավոր թափոններ են փոխադրում, որոնց դեպքում նման արձանագրությունները պետք է պահվեն 12 ամիս:

Իրավասու մարմինների կամ թափոն ունեցող նախկին անձի կամ կազմակերպության պահանջով ներկայացվում են փաստագրական ապացույցներ այն մասին, որ կառավարման գործունեությունն իրականացվել է:

3. Անդամ պետությունները ոչ վտանգավոր թափոններ արտադրողներից կարող են պահանջել, որ նրանք պահպանեն 1-ին և 2-րդ պարբերությունների պայմանները:

Հոդված 36

Կատարումը և տույժերը

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ արգելելու համար թափոնների լքումը, հեռացումը կամ անվերահսկելի կառավարումը:

2. Անդամ պետությունները սահմանում են սույն կանոնակարգի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների կանոնները և իրականացնում են բոլոր անհրաժեշտ

քայլերը՝ դրանք կիրառելու համար: Նշված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ:

ԳԼՈՒԽ VII

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 37

Հաշվետվություններն ու վերանայումը

1. Յուրաքանչյուր երեք տարին մեկ, անդամ պետությունները Հանձնաժողով հաշվետվություն են ուղարկում սույն Հրահանգի կիրարկման մասին՝ ներկայացնելով ոլորտային հաշվետվություն էլեկտրոնային տարբերակով: Այդ հաշվետվությունը նաև տեղեկություններ է պարունակում նավթի թափոնների կառավարման և թափոնների կանխարգելման ծրագրի իրականացման շրջանակում ձեռք բերված առաջընթացի և, հարկ եղած դեպքում, արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասով, 8-րդ հոդվածով նախատեսված միջոցների մասին:

Այս հաշվետվությունը կազմվում է ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված հարցաշարի կամ սխեմայի՝ «Շրջակա միջավայրին վերաբերող որոշ հրահանգների կիրարկմանն առնչվող ստանդարտացման և ռացիոնալիզացման մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 23-ի 91/692/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն [27]: Հաշվետվությունը ներկայացվում է Հանձնաժողով՝ դրան վերաբերող երեք տարվա ժամկետի ավարտից հետո ինն ամսվա ընթացքում:

2. Հանձնաժողովը հարցաշարը կամ պլանը անդամ պետություններին ոլորտային հաշվետվության վերաբերող ժամկետի սկզբից վեց ամսվա ընթացքում:

3. Հանձնաժողովը սույն Հրահանգի իրականացման մասին հրապարակում է հաշվետվություն՝ անդամ պետություններից ոլորտային հաշվետվությունն ստանալուց հետո ինն ամսվա ընթացքում՝ 1-ին պարբերության համաձայն:

4. Մինչև 2014 թվականի դեկտեմբերի 12-ը կատարված առաջին հաշվետվությամբ Հանձնաժողովը վերանայում է սույն Հրահանգի իրականացումը, այդ թվում՝ էներգիայի արդյունավետության դրույթների մասով և հարկ եղած դեպքում առաջարկներ է ներկայացնում՝ հրահանգի վերանայման հարցով: Հաշվետվությամբ նաև գնահատվում են անդամ պետությունների թափոնների կանխարգելման գործող ծրագրերը, նպատակները և ցուցիչներն ու ամփոփվում են Համայնքի մակարդակով կատարվող

ծրագրերի հնարավորությունները, այդ թվում՝ թափոնների հատուկ տեսակների դեպքում արտադրողի պարտավորությունների, նպատակների, ցուցիչների և մշակման վերաբերող միջոցների, ինչպես նաև նյութերի ու էներգիայի վերականգնման գործողությունների մասով, որոնք կարող են նպաստել 1-ին և 4-րդ հոդվածներում սահմանված նպատակների առավել արդյունավետ իրականացմանը:

Հոդված 38

Մեկնաբանությունները և համապատասխանեցումը տեխնիկական առաջընթացին

1. Հանձնաժողովը կարող է վերականգնման և թափոնների հեռացման սահմանումները մեկնաբանելու վերաբերյալ ուղեցույցներ մշակել :

Անհրաժեշտության դեպքում II, R1 հավելվածում նշված հրկիզման կայանները սահմանվում են: Կարող են հաշվի առնվել տեղի կլիմայական պայմանները, ինչպես օրինակ՝ ցուրտը և տաքացնելու անհրաժեշտությունն այնքան, որքան դա ազդում է տեխնիկապես օգտագործվող կամ էլեկտրականության, ջերմության, սառեցման և գոլորշիացման միջոցով արտադրվող էներգիայի քանակության վրա: Հաշվի են առնվում նաև Պայմանագրի 299(2) հոդվածի չորրորդ ենթապարբերությամբ սահմանված ծայրամասային տարածաշրջաններում և Անդամակցության մասին ակտի (1985թ.) 25-րդ հոդվածում նշված տարածքների տեղի պայմանները: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այս միջոցը պետք է ընդունվի 39(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Հավելվածները կարող են փոփոխվել՝ հաշվի առնելով գիտական և տեխնիկական առաջընթացը: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 39(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 39

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

Հոդված 40

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները ոչ ուշ, քան 2010թվականի դեկտեմբերի 12-ը:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով պետք է ներկայացնեն ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 41

Ուժը կորցրած ճանաչող և անցումային դրույթներ

75/439/ԵՏՀ, 91/689/ԵՏՀ և 2006/12/ԵՀ հրահանգները սույնով ուժը կորցրած են ճանաչվում 2010 թվականի դեկտեմբերի 12-ից:

Այդուհանդերձ, 2008 թվականի դեկտեմբերի 12-ից կիրառվում է հետևյալը.

ա) 75/439/ԵՏՀ հրահանգի 10(4) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Պոլիքլորացված բիֆենիլի/պոլիքլորացված տերֆենիլի պարունակություն նավթային թափոններում սահմանելու համար չափման ստանդարտ մեթոդը սահմանվում է Հանձնաժողովի կողմից: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցը պետք է ընդունվի «Թափոնների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի 2006/12/ԵՀ հրահանգի 18(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն պարունակող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան[]»:

բ) 91/689/ԵՏՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

i) 1(4) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն Հրահանգի նպատակով՝ «վնասակար թափոն» նշանակում է.

– սույն Հրահանգի I և II հավելվածների հիման վրա Հանձնաժողովի 2000/532/ԵՀ [] որոշմամբ հաստատված ցուցակում ընդգրկված՝ որպես վտանգավոր դասակարգված թափոն: Այդ թափոնը պետք է ունենա III հավելվածում նշված հատկություններից որևէ մեկը կամ մի քանիսը. Թափոնների ցուցակով հաշվի են առնվում թափոնի ծագումը և բաղադրությունը, իսկ, անհրաժեշտության դեպքում, խտության սահմանային արժեքները: Այդ ցուցակը պարբերաբար վերանայվում է և, անհրաժեշտության դեպքում, փոփոխվում: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցը պետք է ընդունվի «Թափոնների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի 2006/12/ԵՀ հրահանգի 18(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն պարունակող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան[].

– ցանկացած այլ թափոն, որը, ըստ անդամ պետության, ունի III հավելվածում ներառված հատկություններից որևէ մեկը: Նման դեպքերը ծանուցվում են Հանձնաժողովին և վերանայվում են՝ ցուցակը թարմացնելու նպատակով: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն 2006/12/ԵՀ հրահանգի 18(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:»:

ii) 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 9

Սույն Հրահանգի հավելվածները գիտական և տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու և 1(4) հոդվածում նշված թափոնների ցուցակը վերանայելու նպատակով այն միջոցները, որոնք նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը լրացումների միջոցով փոփոխելու համար, պետք է ընդունվեն 2006/12/ԵՀ հրահանգի 18(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրությունն պարունակող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:»:

գ) 2006/12/ԵՀ հրահանգում սույնով կատարվում են հետևյալ փոփոխությունները՝

i) 1(2) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

"2. 1-ին պարբերության (ա) կետի նպատակներով կիրառվում է Հանձնաժողովի 2000/532/ԵՀ [] որոշումը, որի մեջ ներառված է սույն Հրահանգի I հավելվածում նշված կատեգորիաներին պատկանող թափոնների ցուցակը : Այդ ցուցակը պարբերաբար վերանայվում է և անհրաժեշտության դեպքում փոփոխվում է: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 18(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրությունն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:»:

ii) 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 17

Հավելվածները գիտական և տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար անհրաժեշտ միջոցները, որոնք նախատեսված են սույն հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, ընդունվում են 18(4) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությունն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:»:

iii) 18(4) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"4. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Ուժը կորցրած ճանաչված հրահանգներին հղումները պետք է հասկացվեն որպես սույն Հրահանգին հղումներ և պետք է ձևակերպվեն՝ համաձայն V հավելվածում սահմանված համեմատական աղյուսակի:

Հոդված 42

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրատարակվելուն հաջորդող քսաներորդ օրը:

Հոդված 43

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2008 թվականի նոյեմբերի 19-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ջ. Փ. Ջուլեթ

[1] ՊՏ C 309, 16.12.2006թ., էջ 55:

[2] ՊՏ C 229, 22.09.2006թ., էջ 1:

[3] Եվրոպական պառլամենտի 2007 թվականի փետրվարի 13-ի եզրակացություն (ՊՏ C 287 E, 29.11.2007թ., էջ 135), Խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 20-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 71 E, 18.03.2008թ., էջ 16) և Եվրոպական պառլամենտի 2008 թվականի հունիսի 17-ի դիրքորոշում (դեռ չի հրատարակվել Պաշտոնական տեղեկագրում): Խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 20-ի որոշում:

[4] ՊՏ L 114, 27.04.2006թ., էջ 9:

[5] ՊՏ թիվ L 242, 10.09.2002թ., էջ 1:

[6] ՊՏ C 104 E, 30.04.2004թ., էջ 401:

[7] ՊՏ L 257, 10.10.1996թ. էջ 26 Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2008/1/ԵՀ հրահանգով փոխարինված հրահանգ (ՊՏ L 24, 29.01.2008թ., էջ 8):

[8] ՊՏ C 76, 11.03.1997թ., էջ 1:

[9] ՊՏ L 273, 10.10.2002թ., էջ 1:

[10] 2000 թվականի մայիսի 3-ի 2000/532/ԵՀ որոշմամբ փոխարինված՝ «Թափոնների մասին» Խորհրդի 75/442/ԵՏՀ հրահանգի 1(ա) հոդվածի համաձայն Թափոնների ցուցակ սահմանող՝ 94/3/ԵՀ որոշում և «Վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի 91/689/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածի համաձայն՝ Վտանգավոր թափոնների ցուցակ հաստատող՝ Խորհրդի 94/904/ԵՀ որոշում (ՊՏ L 226, 06.09.2000, էջ 3):

[11] ՊՏ L 182, 16.07.1999թ., էջ 1:

[12] ՊՏ L 365, 31.12.1994թ., էջ 10:

[13] ՊՏ L 269, 21.10.2000թ., էջ 34:

[14] ՊՏ L 37, 13.02.2003թ., էջ 24:

[15] ՊՏ L 266, 26.09.2006թ., էջ 1:

[16] ՊՏ L 190, 12.07.2006թ., էջ 1:

[17] ՊՏ L 156, 25.06.2003թ., էջ 17:

[18] ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 20:

[19] ՊՏ L 194, 25.07.1975թ., էջ 23:

[20] ՊՏ L 143, 30.04.2004թ., էջ 56:

[21] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[22] ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

[23] ՊՏ L 102, 11.04.2006թ., էջ 15:

[24] ՊՏ L 204, 21.07.1998թ., էջ 37:

[25] ՊՏ L 332, 09.12.2002թ., էջ 1:

[26] ՊՏ L 197, 21.07.2001թ., էջ 30:

[27] ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48:

[] ՊՏ L 114, 27.04.2006թ., էջ 9",

[] ՊՏ L 226, 06.09.2000, էջ 3:

[] ՊՏ L 114, 27.04.2006թ., էջ 9",

[] ՊՏ L 226, 06.09.2000թ., էջ 3":

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- D 1 Հողի մեջ կամ հողի վրա թափում (օրինակ՝ աղբավայր, և այլն).
- D 2 հողի մաքրում (օրինակ՝ հեղուկի կամ հողում կեղտոտ թափոնների կենսաաքայքայում, և այլն).
- D 3 Խորը ներարկում (պոմպով թափոնների ներարկում ջրհորներում, աղի գմբեթներում կամ բնական գետեղարաններում և այլն).
- D 4 մակերևութային ջրամբարներ (օրինակ՝ հեղուկի կամ կեղտոտ թափոնների թափում փոսերում, ջրամբարներում կամ ծովալճակներում և այլն).
- D 5 հատուկ նախագծված աղբավայր (օրինակ՝ թափում առանձին հերմետիկ խցերում, որոնք փակված և առանձնացված են իրարից ու միջավայրից և այլն).
- D 6 արտանետում ջրային միջավայր, բացառությամբ ծովերի (օվկիանոսների).
- D 7 արտանետում ծովերում (օվկիանոսներում)՝ ներառյալ ծովի հատակում թափոնների թաղումը.
- D 8 սույն հավելվածի այլ մասերում չսահմանված կենսաբանական մաքրում, որի արդյունքում ստացվում են վերջնական բաղադրյալ նյութեր կամ խառնուկներ, որոնք թափվում են D 1– D 12 կետերում նշված գործողություններից որևէ մեկի միջոցով.
- D 9 սույն հավելվածի այլ մասերում չսահմանված ֆիզիկաքիմիական մաքրում, որի արդյունքում ստացվում են վերջնական բաղադրյալ նյութեր կամ խառնուկներ, որոնք թափվում են D 1– D 12 կետերում նշված գործողություններից որևէ մեկի միջոցով (օրինակ, գոլորշիացում, չորացում, կրացում և այլն).
- D 10 հողի վրա այրում.
- D 11 ծովում այրում[*].
- D 12 հիմնական պահեստավորում (օրինակ՝ հանքահորերում կոնտեյներների տեղադրում, և այլն).
- D 13 խառնուրդների պատրաստում կամ խառնում՝ նախքան D 1– D 12 [**] կետերում նշված որևէ գործողություն կատարելը.

D 14 վերափաթեթավորում՝ նախքան D 1– D 12 [**] կետերում նշված որևէ գործողություն կատարելը.

D 15 պահեստավորում՝ նախքան D 1– D 14 կետերում նշված գործողություններ կատարելը (բացառելով թափոնի արտադրման վայրում թափոնները հավաքելուց առաջ կատարվող ժամանակավոր պահեստավորումը) [***]

[*] Այս գործողությունն արգելվում է ԵՄ օրենսդրության և միջազգային կոնվենցիաների համաձայն:

[**] Եթե համապատասխան այլ D ծածկագիր չկա, սա կարող է ընդգրկել նախնական գործողություններ, որոնք կատարվում են թափոնների հեռացումից առաջ՝ ներառյալ

[***] <<Ժամանակավոր պահեստավորում>> նշանակում է նախնական պահեստավորում՝ 3-րդ հոդվածի 10—րդ կետի համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

R 1 Օգտագործվում է հիմնականում որպես վառելիք կամ էներգիայի այլ ձև ստանալու համար [*].

R 2 լուծիչի բարելավում/ռեգեներացիա.

R 3 օրգանական նյութերի վերամշակում/բարելավում, որոնք չեն օգտագործվում որպես լուծիչ (ներառյալ կենսաբանական պարարտանյութի վերածումը կամ կենսաբանական փոփոխության այլ պրոցեսներ) [**].

R 4 մետաղների և մետաղի միացությունների վերամշակում/բարելավում.

R 5 անօրգանական այլ մետաղների վերամշակում/բարելավում [***].

R 6 թթուների և հիմքերի ռեգեներացիա.

R 7 միացությունների վերականգնում՝ աղտոտումը նվազեցնելու նպատակով.

R 8 կատալիզատորներից միացությունների վերականգնում.

R 9 նավթի վերամաքում կամ նավթի այլ օգտագործման ձևեր.

R 10 հողի մշակում, որի արդյունքում ձեռք են բերվում գյուղատնտեսական օգուտներ կամ էկոլոգիական բարելավում.

R 11 R 1– R 10 կետերում նշված գործողությունների արդյունքում ստացված թափոնների օգտագործում.

R 12 R 1– R 11 կետերում նշված գործողությունները կատարելու նպատակով մի ոլորտի թափոնների օգտագործում մեկ այլ ոլորտում [****].

R 13 R 1– R 12 կետերում նշված գործողությունների նպատակով պահեստավորված թափոններ (բացի թափոնի արտադրման վայրում ժամանակավոր պահեստավորումից, որից հետո թափոնները պետք է հավաքվեն) [*****].

[*] Սա ներառում է աղբի հրկիզման կետերը, որոնց նպատակը քաղաքային կոշտ թափոնները մշակելն է միայն այն դեպքերում, երբ դրանց էներգիայի արդյունավետությունը հավասար կամ մեծ է հետևյալից՝

- 0,60՝ գործող կամ Համայնքի գործող օրենսդրության համաձայն թույլատրված կայանների դեպքում մինչև 2009 թվականի հունվարի 1-ը.

- 0,65՝ 2008 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թույլատրված կայանների դեպքում՝ օգտագործելով հետևյալ բանաձևը՝ Էներգիայի արդյունավետությունը = $(E_p - (E_f + E_i)) / (0,97 \times (E_w + E_f))$, որտեղ՝

- E_p ՝ նշանակում է որպես ջերմություն կամ էլեկտրականություն արտադրված էներգիան: Այն հաշվարկվում է որպես էլեկտրականություն արտադրված էներգիան բազմապատկելով 2,6-ով և առևտրային նպատակով արտադրված ջերմությունը բազմապատկելով 1,1-ով (GJ/տարի).

- E_f ՝ նշանակում է տարեկան կտրվածքով էներգիայի ներմուծումը համակարգում, որն առաջանում է գոլորշու արտադրությանը նպաստող վառելիքներից (GJ/տարի).

- E_w ՝ նշանակում է մշակման ենթակա թափոնում պարունակող էներգիա՝ տարեկան կտրվածքով, որը հաշվարկվում է՝ օգտագործելով թափոնի ստորին ջերմարտադրականությունը (GJ/տարի).

- E_i ՝ նշանակում է տարեկան կտրվածքով ստացված էներգիա, բացի E_w -ից և E_f -ից (GJ/տարի).

- 0,97-ը էներգիայի կորուստներ նշանակող գործոն է, որոնք առաջանում են ստորին մակարդակում առաջացող մոխրից և ճառագայթումից: Այս բանաձևը կիրառվում է թափոնների այրման նպատակով Հասանելի լավագույն տեխնոլոգիաների մասին ստանդարտ փաստաթղթի համաձայն:

[**] Սա ներառում է գազաֆիկացում և հրաքայքայում, որի ժամանակ միացություններն օգտագործվում են որպես քիմիական նյութեր:

[***] Սա ներառում է հողի մաքրում, որի արդյունքում հողը վերականգնվում է, իսկ անօրգանական շինանյութերը վերամշակվում են:

[****] Եթե համապատասխան այլ R ծածկագիր չկա, այն կարող է նախնական գործողություններ ընդգրկել, որոնք կատարվում են թափոնների վերականգնումից առաջ՝ ներառյալ, մասնավորապես, ապամոնտաժումը, տեսակավորումը, մանրացումը, կոմպլեկտավորումը, հատիկավորումը, չորացումը, փոշիացումը, նախնական մշակումը, վերափաթեթավորումը, առանձնացումը, տեսակախառնումը կամ խառնումը՝ նախքան R1 to R11 կետերում նշված գործողությունները կատարելը:

[****] Ժամանակավոր պահեստավորում նշանակում է նախնական պահեստավորում՝ 3-րդ հոդվածի 10—րդ կետի համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՅՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԴՐԱՆՔ ԴԱՐՁՆՈՒՄ ԵՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ

H 1 «պայթուցիկ»՝ նյութեր և պատրաստուկներ, որոնք կարող են պայթել կայծի ազդեցության ներքո, կամ որոնք ավելի զգայուն են ցնցումների կամ շփման նկատմամբ, քան դինիտրոբենզոլը.

H 2 «օքսիդացնող»՝ նյութեր և պատրաստուկներ, որոնք առաջացնում են բարձր ջերմաստիճանի ռեակցիաներ այլ նյութերի, մասնավորապես, բնկվող նյութերի հետ շփման արդյունքում.

H 3-A «բարձր դյուրավառության»՝

– հեղուկ նյութեր և պատրաստուկներ, որոնք բռնկվում են 21°C –ից ցածր ջերմաստիճանում (ներառյալ չափազանց դյուրավառ հեղուկներ). կամ

նյութեր և պատրաստուկներ, որոնք կարող են տաքանալ և ի վերջո այրում առաջացնել օդի հետ շփման դեպքում շրջակա ջերմաստիճանի պայմաններում առանց էներգիայի որևէ կիրառության. կամ

– պինդ նյութեր և պատրաստուկներ, որոնք կարող են հեշտորեն բռնկվել շիկացման/մոխրացման աղբյուրի հետ կարճատև շփումից հետո և որոնք շարունակվում են վառվել կամ սպառվել շիկացման/մոխրացման աղբյուրը հեռացնելուց հետո. կամ

– գազային նյութեր և պատրաստուկներ, որոնք բռնկվում են օդում սովորական ճնշման ներքո. կամ

– նյութեր և պատրաստուկներ, որոնք ջրի կամ խոնավ օդի հետ շփման դեպքում վտանգավոր քանակություններով չափազանց դյուրավառ գազեր են բաց թողնում.

H 3-B «դյուրավառ»՝ հեղուկ նյութեր և պատրաստուկներ, որոնք բռնկվում են 21 °C կամ դրանից բարձր կամ 55 °C կամ դրանից ցածր ջերմաստիճանում.

H 4 «գրգռիչ»՝ չկերամաշող նյութեր և պատրաստուկներ որոնք մաշկի կամ լորձային մեմբրանի հետ անմիջական, երկարատև կամ կրկնվող շփման դեպքում կարող են բորբոքում առաջացնել.

H 5 «վնասակար»՝ նյութեր կամ պատրաստուկներ, որոնք ներշնչման կամ կլանման, կամ մաշկ ներթափանցման դեպքում կարող են առաջացնել մարդու առողջության որոշակի վտանգներ.

H 6 «թունավոր»՝ նյութեր կամ պատրաստուկներ (ներառյալ շատ թունավոր նյութեր և պատրաստուկներ), որոնք ներշնչման կամ կլանման, կամ մաշկ ներթափանցման դեպքում կարող են առաջացնել լուրջ, սուր և խրոնիկ հիվանդություններ և նույնիսկ մահ.

H 7 «քաղցկեղածին»՝ նյութեր կամ պատրաստուկներ, որոնք ներշնչման կամ կլանման, կամ մաշկ ներթափանցման դեպքում կարող են քաղցկեղ առաջացնել կամ մեծացնել քաղցկեղի հավանականությունը.

H 8 «կերամաշող»՝ նյութեր և պատրաստուկներ, որոնք կենդանի հյուսվածքների հետ շփման դեպքում ոչնչացնում են դրանք.

H 9 «վարակիչ»՝ նյութեր և պատրաստուկներ, որոնք պարունակում են կենդանի միկրոօրգանիզմեր կամ դրանց թույլները, որոնք կամ մարդու մոտ, կամ այլ կենդանի օրգանիզմներում հիվանդություն են առաջացնում.

H 10 «թունավոր վերարտադրման համար»՝ նյութեր կամ պատրաստուկներ, որոնք ներշնչման կամ կլանման, կամ մաշկ ներթափանցման դեպքում կարող են առաջացնել ոչ բնածին արատներ կամ մեծացնել նման արատների հավանականությունը.

H 11 «մուտագեն»՝ նյութեր կամ պատրաստուկներ, որոնք ներշնչման կամ կլանման, կամ մաշկ ներթափանցման դեպքում կարող են առաջացնել ժառանգական գենետիկ արատներ կամ մեծացնել նման արատների հավանականությունը.

H 12 թափոն, որն արտազատում է թունավոր կամ շատ թունավոր գազեր ջրի, օդի կամ թթվի հետ շփման դեպքում.

H 13 [*] «զգայուն»՝ նյութեր և պատրաստուկներ, որոնք ներշնչման կամ մաշկ ներթափանցելու դեպքում կարող են առաջացնել գերզգայունացման այնպիսի ռեակցիա, որոնք պատրաստուկի կամ նյութի հետագա ազդեցության դեպքում առաջացնում են բնորոշ բացասական հետևանքներ.

H 14 «էկոթունավոր»՝ թափոններ, որոնք ընդունակ են անմիջապես կամ ժամանակի ընթացքում վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի մեկ կամ մեկից ավելի ոլորտների համար.

Ի 15 թափոններ, որոնք ընդունակ են իրենց հեռացումից հետո ինչ որ կերպ առաջացնել այլ նյութեր, որոնք ունեն վերը նշված հատկություններից որևէ մեկը (օրինակ՝ ֆիլտրատ):

Ծանոթագրություններ

1. «Թունավոր» (կամ «շատ թունավոր») «վնասակար», «կերամաշող» «գրգռիչ», «քաղցկեղածին», «վերարտադրման համար թունավոր», «մուտագեն», և «էկոթունավոր» վնասակար հատկությունների հատկանիշները սահմանվել են «Վտանգավոր նյութերի դասակարգման, փաթեթավորման և մակնշմանը վերաբերող անդամ պետությունների օրենսդրական նորմերի, կանոնակարգերի և վարչական դրույթների մոտարկման մասին» Խորհրդի 1967 թվականի հունիսի 27-ի 67/548/ԵՏՀ հրահանգի VI հավելվածում սահմանված չափորոշիչների հիման վրա [2]:

2. Հարկ եղած դեպքում կիրառվում են «Վտանգավոր պատրաստուկների դասակարգմանը, փաթեթավորմանը և մակնշմանը վերաբերող անդամ պետությունների իրավական նորմերի, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի՝ 1999 թվականի մայիսի 31-ի 1999/45/ԵՀ հրահանգի II և III հավելվածում նշված սահմանային արժեքները:

Փորձաստուգման/փորձարարական մեթոդներ

Օգտագործման ենթակա մեթոդները նկարագրված են 67/548/ԵՏՀ հրահանգի V հավելվածում և ՄԵԿ-ի այլ համապատասխան գրություններում:

[*] Եթե փորձաստուգման մեթոդներն առկա են:

[2] ՊՏ 196, 16.08.1967 թ., էջ 1:

[3] ՊՏ L 200, 30.07.1999թ., էջ 1:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

29-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Միջոցներ, որոնք կարող են ազդել թափոնների առաջացմանը վերաբերող շրջանակային պայմանների վրա:

1. Ծրագրման միջոցներ կամ տնտեսական այլ գործիքների կիրառություն, որոնք կարող են ազդել ռեսուրսների արդյունավետության վրա:

2. Ավելի մաքուր և քիչ թափոններ գոյացնող արտադրանք և տեխնոլոգիաներ ձեռք բերելու նպատակով գիտահետազոտության ու փորձարարական նախագծման խթանում և դրա արդյունքների տարածում ու օգտագործում:

3. Թափոնների առաջացման հետ կապված՝ շրջակա միջավայրի ճնշումների արդյունավետ և նշանակալից ցուցիչների մշակում, որի նպատակը բոլոր մակարդակներում թափոնների առաջացման կանխարգելմանը նպաստելն է՝ արտադրանքի համեմատություններ կատարելով Համայնքի մակարդակում՝ սկսած տեղական մարմինների գործողություններից մինչև ազգային մակարդակով օրենսդրական ակտերը:

Միջոցներ, որոնք կարող են ազդել նախագծման և արտադրանքի, ինչպես նաև տարածման փուլերի վրա:

4. Էկո-նախագծման խթանում (բնապահպանական հայեցակետերի համակարգված ինտեգրում արտադրանքի նախագծման ոլորտում՝ նպատակ ունենալով կյանքի բոլոր փուլերում բարելավել արտադրանքի՝ շրջակա միջավայրի առումով արդյունավետությունը):

5. Թափոնների կանխարգելման տեխնիկաների մասին տեղեկատվության տրամադրում՝ նպատակ ունենալով խթանել ըստ ոլորտների հասանելի լավագույն տեխնոլոգիաների կիրառությունը:

6. Իրավասու մարմինների համար վերապատրաստում կազմակերպել՝ թափոնների կանխարգելման պահանջները տրամադրվող թույլտվություններում կիրարկելու առումով, ինչպես պահանջվում է սույն Հրահանգում և 96/61/ԵՀ հրահանգում:

7. Թափոնների արտադրությունը կանխելու միջոցների ներմուծում այն կայաններում, որոնք չեն կարգավորվում 96/61/ԵՀ հրահանգով: Հարկ եղած դեպքում նման միջոցները կարող են ներառել թափոնների կանխարգելման գնահատումներ կամ ծրագրեր:

8. Իրազեկման քարոզարշավների օգտագործում կամ ֆինանսական որոշումների կայացման և այլ աջակցության տրամադրում ձեռնարկություններին: Նման միջոցները, մասնավորապես, կարող են արդյունավետ լինել, եթե դրանք նպատակաուղղված կամ հարմարեցված են փոքր և միջին ձեռնարկություններին ու աշխատում են բիզնեսի գործող ցանցերի միջոցով:

9. Կամավոր պայմանագրերի, սպառող/արտադրողների խմբերի կամ ոլորտային բանակցությունների կիրառությունն այն նպատակով, որ համապատասխան ձեռնարկությունները կամ արդյունաբերական ոլորտները սահմանեն թափոնների կանխարգելման իրենց ծրագրերը կամ նպատակները, կամ ուղղեն չափից շատ թափոն արտադրող արտադրանքը կամ փաթեթավորումը:

10. Վարկանիշ ունեցող շրջակա միջավայրի կառավարման համակարգերի խթանում՝ ներառյալ Համայնքի էկո-կառավարման և աուդիտի համակարգ (ՀԷԿԱՀ) և ԻՍՕ 14001:

Միջոցներ, որոնք կարող են ազդել սպառման և կիրառության փուլերի վրա

11. Տնտեսական գործիքներ, ինչպես օրինակ՝ զուտ առքի խթանիչների տրամադրում կամ որոշակի ապրանքի, կամ փաթեթավորման տարրի համար սպառողի կողմից վճարման պարտավորության ներմուծում, որն այլապես կարող էր անվճար տրամադրվել :

12. Իրազեկության քարոզարշավների օգտագործում և տեղեկատվության տրամադրում, որոնք հասցեագրված են լայն հասարակությանը և սպառողների որոշակի խմբին:

13. Վարկանիշ ունեցող էկո-պիտակների խթանում:

14. Արդյունաբերության հետ պայմանագրերի կազմում, ինչպես օրինակ՝ արտադրանքի պանելների կիրառություն, ինչպիսին իրականացվում են Ինտեգրված արտադրանքի քաղաքականությունների շրջանակում կամ կնքվում են վերավաճառողների հետ՝ թափոնների կանխարգելման և շրջակա միջավայրի համար ցածր ազդեցություն ունեցող արտադրանքի տեղեկատվության հասանելիության մասին:

15. Պետական և մասնավոր գնումների համատեքստում շրջակա միջավայրի և թափոնների կանխարգելման չափորոշիչների ինտեգրումը մրցույթներում և պայմանագրերում՝ պահպանելով Շրջակա միջավայրի պետական գնումների ձեռնարկի

պահանջները, որը հրապարակվել է Հանձնաժողովի կողմից 2004 թվականի հոկտեմբերի 29-ին:

16. Որպես խոտան համարվող համապատասխան արտադրանքի կամ դրա բաղադրիչների վերաօգտագործման և(կամ) վերանորոգման խթանում, մասնավորապես, կրթական, տնտեսական, նյութատեխնիկական կամ այլ միջոցներով, ինչպես օրինակ՝ աջակցություն տրամադրելով որակավորված վերանորոգման և վերաօգտագործման կետերի ու ցանցերի ստեղծմանը, հատկապես, խիտ բնակեցված տարածաշրջաններում:

ՀԱՎԵԼՎԱԾ V

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՑՈՒՄԱԿ

2006/12/ԵՀ հրահանգ | Մոյն Հրահանգ|

1(1)(ա) հոդված | 3(1) հոդված|

1(1)(բ) հոդված | 3(5) հոդված |

1(1)(գ) հոդված | 3 (6) հոդված |

1(1)(դ) հոդված | 3(9) հոդված|

1(1)(ե) հոդված | 3(19) հոդված |

1(1)(զ) հոդված | 3(15) հոդված |

1(1)(է) հոդված | 3(10) հոդված |

1(2) հոդված | 7-րդ հոդված |

2(1) հոդված | 2(1) հոդված |

2(1)(ա) հոդված | 2(1)(ա) հոդված|

2(1)(բ) հոդված | 2(2) հոդված |

2(1)(բ)(i) հոդված | 2(1)(դ) հոդված |

2(1)(բ)(ii) հոդված | 2(2)(դ) հոդված |

2(2), (բ)(iii) հոդված | 2(1)(զ) և (2)(զ) հոդված |

2(1)(բ)(iv) հոդված | 2(2)(ա) հոդված |

2(1)(բ)(v) հոդված | 2(1)(ե) հոդված |

2(2) հոդված | 2(4) հոդված |

3(1) հոդված | 4-րդ հոդված |

4(1) հոդված | 13-րդ հոդված |

4(2) հոդված | 36(1) հոդված |

5-րդ հոդված | 16-րդ հոդված |

6-րդ հոդված | — |

7-րդ հոդված | 28-րդ հոդված |

8-րդ հոդված | 15-րդ հոդված |

9-րդ հոդված | 23-րդ հոդված |

10-րդ հոդված | 23-րդ հոդված |

11-հոդված | 24-րդ և 25-րդ հոդվածներ |

12-րդ հոդված | 26-րդ հոդված |

13-րդ հոդված | 34-րդ հոդված |

14-րդ հոդված | 35-րդ հոդված |

15-րդ հոդված | 14-րդ հոդված |

16-րդ հոդված | 37-րդ հոդված |

17-րդ հոդված | 38-րդ հոդված |

18(1) հոդված | 39(1) հոդված |

— | 39 (2) հոդված |

18(2) հոդված | — |

18(3) հոդված | 39(3) հոդված |

19-րդ հոդված | 40-րդ հոդված |

20-րդ հոդված | — |

21-րդ հոդված | 42-րդ հոդված |

22-րդ հոդված | 43-րդ հոդված |

I հավելված | — |

II Ա հավելված | I հավելված |

IIԲ հավելված | II հավելված |

1(1) հոդված | 3(18) հոդված |

2-հոդված | 13-րդ և 21-րդ հոդվածներ |

3(1) և (2) հոդված | — |

3(3) հոդված | 13-րդ հոդված |

4-րդ հոդված | 13-րդ հոդված |

5(1) հոդված | — |

5(2) հոդված | — |

5(3) հոդված | — |

5(4) հոդված | 26-րդ և 34-րդ հոդվածներ |

6-րդ հոդված | 23-րդ հոդված |

7(ա) հոդված | 13-րդ հոդված |

7(բ) հոդված | — |

8(1) հոդված | — |

8(2)(ա) հոդված | — |

8(2)(բ) հոդված | — |

8(3) հոդված | — |

9-րդ հոդված | — |

10(1) հոդված | 18-րդ հոդված |

10(2) հոդված | 13-րդ հոդված |

10(3) և (4) հոդված | — |

10(5) հոդված | 19-րդ, 21-րդ, 25-րդ, 34-րդ և 35-րդ հոդվածներ |

11-րդ հոդված | — |

12-րդ հոդված | 35-րդ հոդված |

13(1) հոդված | 34-րդ հոդված |

13(2) հոդված | — |

14-րդ հոդված | — |

15-րդ հոդված | — |

16-րդ հոդված | — |

17-րդ հոդված | — |

18-րդ հոդված | 37-րդ հոդված |

19-րդ հոդված | — |

20-րդ հոդված | — |

21-րդ հոդված | — |

22-րդ հոդված | — |

I հավելված | — |

1(1) հոդված | — |

1(2) հոդված | — |

1(3) հոդված | — |

1(4) հոդված | 3(2) և 7-րդ հոդվածներ |

1(5) հոդված | 20-րդ հոդված |

2(1) հոդված | 23-րդ հոդված |

2(2)-(4) հոդված | 18-րդ հոդված |

3-հոդված | 24-րդ, 25-րդ և 26-րդ հոդվածներ |

4(1) հոդված | 34(1) հոդված |

4(2)(3) հոդված | 35 հոդված |

5(1) հոդված | 19(1) հոդված |

5(2) հոդված | 34(2) հոդված |

5(3) հոդված | 19(2) հոդված |

6-րդ հոդված | 28-րդ հոդված |

7-րդ հոդված | — |

8-րդ հոդված | — |

9-րդ հոդված | — |

10-րդ հոդված | — |

11-րդ հոդված | — |

12-րդ հոդված | — |

I և II հավելվածներ | — |

III հավելված | III հավելված |